

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վեպ ՀՅՈՒՐԻԿ ՍԵՆԿԱԿԻՑԻ

(Շարունակութիւն ¹⁾)

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Գաշտէն, 23 լուլիսի.

Արդէն մի շաբաթ է, ինչ Գաշտէնումն ենք ամբողջ անով, այսինքն՝ Անելիան, հօրաքոյրս, պանի Ցելինան, ևս ու Կրոսիցկին։ Մի առժամանակ լնդհատեցի գրելս, ոչ թէ նրա համար, որ կարիք չէի զգում, այլ որովհետև իմ կրածս ոչ մի կերպ չէր կարելի խօսքով արտայատել։ Երբ մարդ կռում է իրան ճնշող ոչժի դէմ, նա ոչ գլուխ է ունենում, ոչ էլ ժամանակ պարապելու ուրիշ որ և է բանով։ Սանսօնը պատմում է իւր յիշատակարանում, թէ ինչպէս մի դատապարտեալի կաշին քերթում էին և քերթելուց յառաջացած վերքերի մէջ հալած անագ էին լցնում, իսկ նա այնպիսի նեարդային գրգռման էր հասել, որ շարունակ գոռում էր «encore! encore!» (էլի, էլի) այնքան, մինչև որ ուշաթափ ընկաւ։ Ես էլ այդ տեսակ գրգռման մէջ էի։ Ես արդէն ուշաթափել եմ, այսինքն ուժասպառ եմ եղել և բոլորովին ընկճւել։

Իմ վրայ ծանրանում է մի ահազին ձեռք և ճնշում է ինձ, ինչպէս այն սարերը, որոնց մէջ մենք ապրում ենք այժմ։

1) Տես «Մուրճ» 1892 թ. №№ 1—12, 1893 թ. № 1, 2.

Բայց ինչ կարող եմ անել, զօ չեմ կարող դիմադրել, —թող ուրեմն ձնշի ինձ, Ես չգիտէի, որ մարդ կարող է զանել եթէ ոչ սփոփանք, գոնէ մի տեսակ հանգստութիւն իւր անզօրութեան զգացմունքի և ողորմելիութեան գիտակցութեան մէջ:

Երանի նորից շակսէի դիմադրել, երանի այս դրութիւնս որքան կարելի է երկար տևէր: Այն ժամանակ կը կարողանայի զրի անցնել իմ գլխին եկածը այնպէս, ինչպէս եթէ մի ուրիշ, կողմնակի մարդ լինէի: Բայց փորձով գիտեմ, ինչպէս մէկ օրը նման չի լինում միւս օրւան, և վախենում եմ այն բանից, ինչ որ վաղւան օրը կարող է բերել:

24 Կոնխիսի.

Վարշաւայից զուրս գալուց քիչ առաջ յիշատակարանումն զրել եմ, թէ ուրիշի կնոջը սիրելը լրբութիւն է, եթէ սէրը առ երես է, և մեծ անբախտութիւն, եթէ սէրը ճշմարիտ է: Այդ զրել էի կրոմիցկու գալուց առաջ, երբ դեռ պարզ գաղափար չունէի այդ անբախտութեան բոլոր բաղադրեալ տարրերի մասին:

Այդ անբախտութիւնը աւելի ազնիւ բան էի կարծում, քան է խսկապէս: Միայն այժմ եմ տեսնում, որ նրա մէջ, բացի սաստիկ ցաւից, կայ և փոքր ինչ ստորացումն, և գիտակցութիւն, որ ինքդ անպէտք ու ծիծաղելի մարդ ես, և' ատելու անհրաժեշտութիւն, և' հարկաւորութիւն կատարելու հազար ու մի ստոր վարմունքներ ու դիմելու. հազար ու մի անմարդավագել զգուշութիւնների, —լաւ փունջ է, չչ: Իրաւ, մարդ այդ ծաղիկների հոտից կարող է խեղդուել:

Ցեսնում է Աստւած, թէ ինչ զւարճութեամբ կը բռնէի կրոմիցկու կոկորդից, հուպ կը տացի նրան պատին և ուղղակի կասէի երեսին՝ «Քո կնոջը սիրում եմ, մինչդեռ այժմ պէտք է աշխատեմ», որ նրա մոքոմն անգամ անց չկենաց, թէ Անելկան ինձ դուր է զալիս: Ինչ հիանալի դեր է այդ Անելկայի վերաբերմամբ: Ի՞նչ կարող է մտածել նա իմ մասին: Այդ դեռ փնջի մի ծաղիկն է:

25 Կոնխիսի.

Փանի կենդանի եմ չեմ մուտանալ այն օրը, երբ կրոմիցկին եկաւ: Նա շնորհ բերեց ուղղակի ինձ մօտ՝ տունս, Վարշաւա: Գիշերը ուշ, երբ տուն վերաբարձաց, նախասենեակում տեսաց ինչ որ

չեմողանները՝ Զգիտեմ ինչու, անմիջապէս գլխի ընկայ, թէ այդ Կրոմիցկու իրերը կը լինեն։ Յանկարծ հէնց ինքը երեաց կողքի սենեակից, և մոնոկլը աչքից վայր ձգելով, գրկաբաց վրայ պրծաւ իւր նոր բարեկամին ողջունելու։ Ես կարծես երազի մէջ՝ տեսնում եմ նրա գլուխը, որ նման էր մեռելի գանգի, նրա փայլուն աչքերն ու թուխ մազերը։ Մի բոլէից յետոյ ինձ զգացի ինչպէս մի փայտէ մանըքէնի զրկում։ Հեշտ էր նախառեսնել, որ Կրոմիցկին կը գայ, բայց էլի ինձ այնպէս զգացի, ինչպէս թէ մահս տեսնէի։ Կարծես սարսափելի երազ լինէի տեսնում ու երազիս մէջը լսում։ Ալմաւ ես, Աէօն» խօսքերը—ամենաֆանտաստիկական, ամենահաւանական խօսքեր, որ ես կարող էի լսել։ Յանկարծ այնպէս կատաղութիւնս եկաւ, այնպիսի զգւանք ու վրդովմունք զգացի, որ ինչքան կամք ունէի սկիտք է լարէի, որպէս զի չյարձակւեմ այդ մարդու վրայ, նրան գետնովը շտամ ու գլուխը չշախչախեմ։ Առաջ էլ կատաղութիւն ու զգւանք և մ զգացել, բայց առանց վրդովմունքի։ Այդ նոր ու անհասկանալի բան էր ինձ համար. իւր զգացածը երկիւղ չէր կենդանի մարդուց, այլ մի տեսակ զարգանդ՝ մեռածից։ Երկար ժամանակ չէի կարողանում ոչ մի խօսք խօսել։ Բարեբախտաբար Կրոմիցկին կարծեց, թէ ես իրան չճանաշեցի, և զարմացել եմ, որ նա, բոլորովին անծանօթ մարդ լինելով, ինձ հետ վարւում է ինչպէս մօտ մարդու հետ ու ինձ «դու» ասում... մինչև հիմա էլ այդ բանը ինձ սասաիկ կատաղեցնում է։

Ես աշխատեցի ուշքս գլուխս ժողովել, իսկ նա մոնոկլը զրեց աշքին, և նորից թափ տալով ձեռքս, սկսեց հարց ու փորձ անել։ —Ի՞նչպէս ես, լմաւ ես Անելիմն ինչպէս է։ Մայրիկն ինչպէս է։ Էլի հիւանդ է, համար հօրաքնըրը։

Նորից ապշութիւն եկաւ վրաս ու սիրոս քիչ էր մնում կատաղութիւնից ճաքի, որ այդ մարդը ինձ մօտ ու սիրելի կանանց այնպէս էր անւանում, կարծես իրան էլ նոյնքան մօտ լինէին նրանք։ Աշխարհային մարդը, ինչպէս որ ես եմ, շատ բան կը տանի ու ամեննեին ցոյց չի տալ, —այդ բանին նրանց երեխայութիւնից են վարժեցնում, —բայց ես զգում էի, որ չեմ դիմանալ։ Պատւիրեցի թէց տան, որ ուշքս գլուխս ժողովեմ և միտքս ուրիշ բանով զբաղեցնեմ։ Կրոմիցկուն իւր լոռութիւնը անհանգստացրեց, նա էլի

մոնոկլը աչքից վայր դցեց ու շտապով հարցրեց.

—Զլինի մի բան է պատահել, Խնջու ու ինչ չես խօսում:

—Ամենքը առողջ են, —պատասխանեցի ես:

Յանկարծ միտք արեցի, որ այդպէս յուզւելով, ես այդ անտառնելի մարդուն առաւելութիւն եմ տալիս ինձ վրայ, և ինձ զսպեցիր նրան տարայ ճաշարան, նստացրեցի սեղանի մօտ ու սկսեցի հարց ու փորձ անել.

—Ի՞նչ նոր լուրեր ես բերել, երկար ժամանակով ես եկել:

—Խնջու էլ չգիտեմ: Անելկային կարօտել եմ: կարծում եմ նա էլ ինձ կարօտած կը լինի: Մենք երկու ամիս էլ իրար հետ կարգին շապրեցինք: Զահէլ ամուսինների համար այդ կարծեմ շատ քիչ է, չէ:

Եւ նա չոր ու ցամաք ծիծաղեց:

—Ի վերջոյ ես այստեղ էլ գործեր ունեմ: Գործեր, գործեր ու միշտ գործեր:

Նա սկսեց իւր գործերի մասին երկար ու բարակ պատմել, բայց ես ականջ չէի դնում և ասածիցը ոչ մի խօսք չհասկացայ: Ամեն խօսքի տակին ու գլխին լսում էի միայն «օրսա» (ֆանդ) խօսքը և տեսնում էի մոնոկլի շարժումը: Զարմանալի բան է, որ ամենածանր վշտի բոպէներին շատ դատարկ բաներ մարդի զայրացնում են: Զգիտեմ ամեն մարդ է այդպէս լինում, թէ չէ միայն ես եմ այդպէս, բայց այդ անիծւած «օրսա» խօսքը ու ոչ պակաս անիծւած մոնոկլը ինձ բոլորովին համբերութիւնից հանեցին: Կրոմիցկու հետ տեսնելուս առաջին բոպէներին ուշքս համարեա վրաս չէր, բայց էլի կարողացայ համարել, քանի անդամ նա մոնոկլը դրեց աչքին ու քանի անդամ վերցրեց աչքի վրացից: Այդպէս է լինում միշտ, այժմ էլ այդպէս եղաւ:

Թէից յետոյ կրոմիցկուն տարայ նրա համար որոշւած սենեակը: Առանց իւր դատարկաբանութիւններին վերջ տալու, նա չեմոդականները բաց էր անում և ինձ ցոյց տալիս Արևելքից բերած զանազան իրեր: Ի վերջոյ պէտքի մէջից հանեց երկու փոքր գորգեր և ասաց.

—Բաթումումն եմ գնել: Լման են, չէ: Փռել կը տամ մեր մահճակալների առաջ:

Նրանում էլ ոյժ չմնաց, նստեց բազկաթուի վրայ ու շարունակեց պատմել իւր գործերի մասին՝ Արևելքում, և իւր յոյսերի մասին, բայց ես մոտածում էի բոլորովին ուրիշ բանի մասին։ Մեծ բախտաւորութիւն է, երբ մարդ անկարող լինելով կուել իւր ամբողջ գժբախտութեան գէմ, գէթ կուիւ և մղում նրա մի առանձին մասի դէմ։ Այժմ ինձ ամենից շատ հետաքրքրում էր՝ արդեօք Կրոմիցկին կը գնայ Գաշտէյն թէ չէ, ուստի հարցրի։

—Ես քեզ մինչև ացմբ լսւ չեի ճանաչում, բայց հիմա տեսնում եմ, որ դու մեծ կարողութիւն կը դիզես։ Քո մէջ թեթեամտութիւն ասած բանը ամենեին չկաց, և ի հարկէ, ցիմար սենտիմենտալութեան համար գործերդ չես զոհի։

Կրոմիցկին տաք-տաք ձեռքս սեղմեց։

—Կը հաւատամ ինձ, —ասաց նա, —ինչքան թանգ է ինձ համար, որ դու ինձ վրայ միշտ այդպէս հաւատ ունենաս։

Սկզբում ես ուշ չդարձրի, թէ նրա այդ խօսքերը ինչ էին նշանակում։ Ինձ այն միտքն էր զբաղեցնում, որ ես Կրոմիցկու հետ անազնիւ ու կեղծաւոր եմ վարում։ անազնիւ՝ որովհետեւ ամենեւին չեմ հաւատում նրա ընդունակութիւններին, և կեղծաւոր՝ որովհետեւ շողոքորթում եմ նրան, մինչդեռ ուրախութեամբ նրա արիւնը կը խմէի։ Բայց ես ուզում էի, ինչ էլ լինի, չժողնեմ, որ նա մեզ հետ Գաշտէյն գայ, ուստի շարունակում էի առաջ գնալ իմ կեղտոտ ճանապարհով։

—Ակներև է, որ մերոնց Գաշտէյն գնալը քեզ ձեռնտու չէ, —ասացի ես։

Նա սկսեց պախարակել պանի Յելինացի հիւանդութիւնը, ինչպէս շատ սովորական եսական մարդ, որ աշխարհքի մէջ ամեն բան միայն այնքան է հասկանում, որքան իրան է վերաբերում։

—Պարզ բան է Գաշտէյն գնալը ինձ սկի ձեռնտու չի։ Խօսքը մեր մէջ մնաց, կարծում եմ, առանց Գաշտէյն գնալու էլ բանը եօլա կերթար։ Ամեն բան պէտք է մի սահման ունենայ, թէկուզ հէնց աղջկայ սէրը դէպի իւր մայրը։ Ամեն ամուսնացած կին պէտք է հասկանայ, որ իւր առաջին ու գլխաւոր պարտաւորութիւնները իւր մարդուն են վերաբերում։ Մէկ էլ, երբ մայրը միշտ աշքի առաջ ցցւած է լինում, կաշկանդում է ամուսինների ազատու-

թիւնը, խանգարում է նրանց միմեանց մօտենալուն ու հոգով սրսով միմեանց նւիրւելուն։ Խօսք շունեմ, որդու սէրը դէպի իւր ծնողը զովելի բան է, բայց երբ ծալրայեղութեան է հասնում; այն ժամանակ միւսների օրը չի լինում։

Երկար ու բարակ խօսելով այդ նիւթի մասին, նա յայտնեց շատ այդպիսի ճշմարտութիւններ և զարմանալի տափակ ու ծամ-ծմած մոքեր, որոնք իմ կատաղութիւնը աւելի էին բերում, ո-րովհետև նրա ասածի մէջ մի քիչ ճշմարտութիւն կար։

—Բայց էլ ճար չկաց Ես վաճառական մարդ եմ, գիտեի ինչ պայման եմ՝ կապում, և այժմ պատրաստ եմ կատարելու իմ բո-լոր պարտաւորութիւնները։

—Ուրեմն դու գնում ես Գաշտէյն։

—Ամենից առաջ այդ պահանջում է իմ անձնական շահը։ Ինձ համար անհրաժեշտ է, որ մենք ու հօրաքոյրը աւելի մօտ ճա-նաւենք միմեանց և դուք ինձ աւելի հաւատաք։ Մենք յետոյ էլ դրա մասին կը խօսենք։ Ես մէկ կամ մէկ ու կէս ամիս ազատ ժա-մանակ ունեմ։ Արևելքում թողել եմ իմ տեղ Լիւցիսն Խւաս-տովսկուն։ Նա, ինչպէս անդիմացիք ասում են, «a salid man»։ Բացի այդ, գիտես էլի, ինչքան լաւ կը լինի Ասելկայի պէս կնոջ հետ մի շաբաթ էլ աւելի ապրել, —լաւ կը լինի չէ։

Նա բաց արեց գեղին, փտած ատամները, քրքջաց ու ծնկիս խփեց։ Ուղեղս սառուց կտրեց։ Զգում էի, որ գոյնս գցում եմ, և երեսս դարձնելով ճրագի լոյսից, որ Կրոմիցկին չնկատի իմ գու-նատելը, քաջութիւն ունեցաց հարցնել։

—Ե՞րբ ես գնում Պլոշով։

—Վաղը, վաղը։

—Բարի գիշեր։

—Քեզ լոյս բարի, —պատասխանեց Կրոմիցկին մոնոկլը աչքից վայր թողնելով։

Եւ ձեռները դէպի ինձ մեկնելով աւելացրեց։

—Եատ ուրախ եմ, որ մենք կարող կը լինենք միմեանց մօտե-նալ։ Ես դէպի քեզ միշտ աււանձին համակրանքով եմ վերաբերել։ Երաշխաւոր կը լինեմ, որ մենք միմեանց շատ լաւ կը հասկանանք։

Կը հասկանանք միմեանց։ Ինչքան նա յիմար է ու անմիտ։ Բայց

նա որքան աւելի յիշար է, այնքան աւելի սարսափով եմ մտածում; որ Անելկան նրա սեփականութիւնն է, նրա՝ ուղղակի առարկան է: Այդ գիշեր սկի մոքովս էլ չանցաւ շորերս հանել: Երբէք այնքան պարզ չել զգացել, որ կայ դրութիւն, երբ վերջանում են թէ խօսքերը, թէ դժբախտութիւնը հասկանալու և զգալու ընդունակութիւնը, բայց ինքը դժբախտութիւնը չի վերջանում: Բաւական կը լինի ասեմ, որ իմ առաջւայ կեանքը, երբ Անելկան ոտնակուս էր անում իմ բոլոր զգացմունքները, այն կեանքը, որից աւելի դժբախտը ես չէի երեակայում:—այժմ ինձ ամենաբարձր ու առասպելական երջանկութիւն էր երեսում: Եթէ այժմ սատանան դար ու ինձ ասէր, թէ ամեն բան առաջւանը կը մնայ, Անելկան միշտ կանարդի իմ սէրը, բայց Կրոմիցկին յաւիտեան չի դայ, եթէ դրա փոխարէն հոգիս իրան տամի:—ես ուրախութեամբ կը տայի հոգիս և առանց վարանելու պայմանը կը ստորագրէի: Երբ կինը մերժում է տղամարդին, տղամարդի մէջ այն համոզումն է կազմում, թէ իր սիրած կինը կանգնած է մի այնպիսի բարձր գօթական աշտարակի գլխին, մի այնպիսի անմատչելի բարձրութեան վրայ, ուր աչքերը վեր բարձրացնել անդամ մարդ չի համարձակի: Ես էլ ակամացից ացգպէս էի մտածում Անելկայի մասին, երբ յանկարծ լոյս աշխարհ ընկաւ մի ինչ որ պան Կրոմիցկի Բաթումից բերած իւր երկու գորգերով, և այդ անողոք ու անյողողողի կնոջը, այդ քրմուհուն, առանց այլեալլութեան բարձրութիւնից ցած իջեցրեց ուղիղ այդ գորգերի վրայ: Մարդի սարսափ գալիս է, երբ մտածում է, որ այդ մարդը սրտի ուզածի մասին կարող է մտածել, երեակայել—և այն էլ ինչ մարդ, զգւելիի չափ տափակ ու ողորմելի մի մարդ: Ինչքան որ ինձանից թէօրիաներ հնարեմ, ինչքան որ ուղեղ փչացնեմ ապացուցանելու համար, թէ սէրը ամուսնական կապերից աւելի զօրեղ է, թէ ես իրաւոնք ունեմ սիրելու Անելկային և Անելկան՝ ինձ, վերջ ի վերջոյ ես կը մնամ իմ թէօրիաների հետ, իսկ Կրոմիցկին կապրի Անելկայի հետ:

Մարդ կարող է միայն որոշ չափով ծանրութիւն կրել, իսկ եթէ չափից աւելի բարձր են, նա վայր կընկնի: Իմ անոահման դժբախտութեան, ինչպէս և ի՞ անչափ յիմարութեան ու

ստորանալուս հետ միասին ես զգում էի, որ Կրոմիցկու գալու ըռ-
պէից Անելկային սկսել եմ արհամարհել: Խնչմաւ: Ես չէի կարող ոչ
մի մարդավարի պատճառ բերել այդ արդարացնելու համար: Աինչ
պէտք է մարդին պատկանի: Ես այդ ձշմարտութիւնը անգիր գի-
տեմ, ինչպէս գիտի և ամեն լիմար մարդ, բայց իմ զգացմունքիս
առւաջ այդ ստորացնում է Անելկային: Վերջապէս Բ'նչ գործ ո-
նեմ որամարանութեան ու դատողութեան հետ: Գիտեմ, որ նրան
արհամարհում եմ, և որ դրան դիմանալ չեմ կարող: Ձգում էի,
որ տիսպիսի պայմաններում իմ գոյութիւնը միանգամայն անհնար
կը լինի և անկասկած շուտով այնպիսի վճռական փոփոխութիւններ
կը լինեն, որ ամեն բան, ինչ որ առաջ կար, տակն ու վրայ կը լինի:
Բայց Բ'նչ փոփոխութիւններ: Եթէ արհամարհանքը խեղբէր
իմ սէրը, ինչպէս գայլը խեղբում է ոչխարին,—լաւ բան կը լինէր:
Բայց սիրոս վկայում է, որ զլմիս մի ուրիշ բան է գալու: Եթէ
ես չը սիրէի Անելկային, չէի էլ արհամարհի, իսկ եթէ արհամար-
հում եմ,—կը նշանակի սիրում եմ, և միայն վզիս շղթայի վրայ
մի աւելորդ օղակ եմ աւելացնում: Նատ լաւ գիտէի, որ ինձ Կրո-
միցկուց ու նրանց փոխադարձ յարաբերութիւններից, ուրիշ ոչինչ
չի հետաքրքրում:—ոչ լոյս, ոչ խաւար, ոչ պատերազմ, ոչ խաղա-
ղութիւն և ոչ մի ուրիշ բան: Խմ կեանքի միակ raison d'être-ը
Անելկան է, կամ աւելի ճիշտը Անելկան ու իւր մարդը և իմ մի-
ջամտելը նրանց կեանքում: Խոկ եթէ հէնց այդ raison d'être-ի
շնորհիւ ես անկարող եմ ապրել, Բ'նչ պէտք է լինի իմ վերջը:
Եւ յանկարծ սաստիկ զարմացքս եկաւ, որ դրա միակ ու անենա-
հասարակ ճարը, ինչտէս ման է, մինչև այժմ միտքս չի եկել:
Բ'նչ մեծ ոյժ կաչ մարդու ձեռքում՝ ուզած ժամանակ կեանքի
թելը կտրել: Այժմ, ով իմ կեանքի չար հրեշտակ, սպասում եմ
քեզ ու ասում: Հայնքան ժամանակ միայն կարող ես բեռը դարսել
իմ վզին, որքան ես ուզեմ: Երբոր բեռիս ծանրութիւնը չափից
դուրս կը լինի, ես քեզ էլ, քո ծանրութիւնն էլ վրայիցս դէն
կը շպրտեմ... «E poi eterna silenza»... (Եւ այնուհետեւ յաւիտե-
նական լութիւն)... Նիրւաննա, Ցիլիների չորրորդ չափամեքը...
վերջապէս ես ինչ գիտեմ էլ ինչ: Միայն այն միոքը՝ թէ ամեն
բան վերջ ի վերջոյ ինձնից է կախւած, ահաղին թեթևութիւն

պատճառեց ինձ... Մի ժամի չափ բազմոցի վրայ պառկած մտածում էի, թէ երբ և ինչպէս իրագործեմ միտքս,—և հէնց միայն այն, որ Կրոմիցկին, նրա գալուստը և իմ նախանձը դէպի նամոքիցս դուրս չեկան, ինձ մեծ թեթևութիւն պատճառեց: Անձնասպանութեան պէս գործն էլ իւր նիւթական հոգսերն ունի, որ մարդու ակամայից մտածել են տալիս բացի իւր անբախտութիւնից և ուրիշ բաների մասին: Խսկոյն միտս եկաւ, որ իմ ձանապարհի բեռուերը ամենավոքը տեսակիցն է, տեղիցս վեր կացայ, որ նայեմ, և վճռեցի նորը գնել: Պլուս էի ճաքացնում այն բանի վրայ, թէ ինչպէս անեմ, որ բոլորը կարծեն թէ այդ պատահմունքից է եղել... Ասենք այդ բոլորը լոկ թէօրիաներ էին, որ իմ գլխի մէջ զեռ որոշ զիտաւորութեան ձեւ չէին ընդունել: Խնչ որ իմ մէջ կատարում էր, աւելի շուտ կարելի էր անւանել մի տեսակ զիտակցութիւն անձնասպանութեան հնարաւորութեան մասին, քան թէ խսկապէս կեանքիս վերջ գնելու վճիռ: Բացի այդ համոզւած էի, որ այդ շուտով չի լինի: Որովհետեւ մտածում էի ինձ ու ինձ, եթէ ինձ յայտնի է այն դուռը, որով երբ ուզենամ, դուրս կը գամ արձակ դաշտը, մի փոքր էլ կը մնամ տեսնելու համար, թէ չարիքը մինչև որ աստիճան կը լարի իւր ոյժերը, և ինձ համար էլի ինչ տանջանքներ են պատրաստած: Ես այլում էի հիւանդոտ ու անդիմաղրելի հետաքրքրութիւնից, թէ ինչ կը լինի վերջը, ինչպէս այդ մարդիկը կապրեն միասին և Անելկան ինչ երեսով պէտք է նայի ինձ... Վերջապէս ոյժից բոլորովին ընկայ և այդպէս առանց հանւելու քնեցի ծանր ու երազախառն քնով: Նատ խառնավնթոր երազներ տեսայ, —տեսնում էի Կրոմիցկու մոնոկլը, բեռուերները, զանազան մարդիկ ու առարկաներ, բոլոր անկարդ կերպով միմեանց խառնւած: Զարթնեցի ուշ: Կրոմիցկին արդէն գնացել էր Պլոշով: Առաջին միտքը, որ զլսում ծագեց, այն էր, որ նրա յետեկցը գնամ, տեսնեմ նրանց միասին, բայց կառք նստելուց յետոյ յանկարծ զգացի, որ այդ չեմ կարողանայ տանել, որ այդ իմ ոյժիցը վեր կը լինի, հասկացայ, որ այդ չափից դուրս կարագացնի իմ ելքը բաց դռնից դէպի անյայտ տարածութիւնը, —և հրամայեցի ինձ ուրիշ տեղ տանել:

Ամեն մարդ, թէկուզ ամենամեծ պեսսիմիստը լինի նա, բնազդ-

մամբ խորշում է չարիքից ու բոլոր ուժով կռւում նրա դէմ: Դրա համար մարդ պինդ բանում է ամեն մի յոյսից և ամեն փոփոխութիւնից բարեփոխութիւն սպասում: Ես էլ յանկարծ այնպիսի փափագ զգացի Գաշտէյն գնալու, որ կարծես իմ փոփոխութիւնը դրանից էր կախւած: Այժմ ուշ ու միտք այն էր միայն, որ նրանց Պլոշովից դուրս տանեմ: Այդ միտքը ինձ հանդիստ չէր տալիս և այնպէս էր դրաւել ինձ, որ այդ ամբողջ օրը միայն նրա իրագործելու յետեկցն էի ընկել:

Դա ինձ համար դժւար չէր: Տիկինները համարեա պատրաստ էին: Կրոմիցկին իւր գալու մասին իմաց չէր տեել, երեի կամեցել էր իւր կնոջը մի լաւ սիւրպրիզ անել, այնպէս որ մենք պէտք է մէկ-երկու օրից յետոյ ճանապարհ ընկնէինք: Այժմ ի հարկէ պէտք էր թողնել, որ նա հանգստանայ և հարցնել, թէ երբ կարող է գնալ, բայց ես դիտմամբ նրան մարդատեղ չըդրեցի ու այնպէս վարւեցի, որպէս թէ նա սկի զոյսութիւն չունենար:

Գնացի երկաթուղու կալարանը, պատրիեցի միւս օրւան համար պահեն ննջարան—վագոն մինչև Վիէննա ու յետոյ զրեցի հօրաքրոջս, թէ տոմսակները վերցրած պատրաստ են. և որովհետեւ բոլոր վագոնները մինչև շաբթւայ վերջը բռնւած են, այդ պատճառով վաղը պէտք է ճանապարհ ընկնենք:

26 Յունիսի.

Ելի վերադառնում եմ դէպի մեր՝ Վարշաւայում անցրած վերջին օրերը, նրանց յիշատակը այնպէս խոր է տպաւորել իմ մըտքում, որ չեմ կարող լուսվեամբ անցնել: Տարօրինակ բան էի զգում Կրոմիցկու գալու միւս օրը: Ինձ թւում էր, թէ Անելիկայն այլ ևս չեմ սիրում, և մի և նոյն ժամանակ չեմ կարող առանց նրան ապրել: Կեանքումն առաջին անգումն էի զգում այդպիսի, այսպէս ասած, բարոյական երկատութիւն: Առաջ, երբ իմ զգացմունքը կանոնաւոր էր ընթանում, ես ասում էի ինձ ու ինձ սիրում եմ նրան, ուրեմն տենչում եմ տիրանալ նրան, բոլորովին նման այն տրամաբանութեանը, ինչ տրամաբանութեամբ Դեկարտն էր ասում՝ ամտածում եմ, ուրեմն կամ: Այժմ ամեն բան փոխւել է, այժմ ևս չեմ սիրում, բայց տենչում եմ տիրանալ նրան, և

այս երկու առանձին մասերը իմ մէջը կան այնպէս, ինչպէս երկու առանձին կտոր քարերի վրայ փորագրւած արձանագրութիւններ, և երկուսն էլ ինձ այնպէս էին տանջում, որ խօսք չեմ դոնում արտայայտելու։ Նուսով չըհամոզւեցի, որ այդ աշեմ սիրումն-ը մոլորութիւն էր։ Ես սիրում եմ ինչպէս առաջ, բայց այնպիսի վշտախառն ու դառը սիրով, որ այդ սիրոյ ու բախտաւորութեան մէջ ընդհանուր ոչինչ չըկայ։

Մէկ մէկ միտք եմ անում, որ եթէ ալժմ մինչև անդամ լսէի Անելկայի խոստովանութիւնը, եթէ նրան մարդից բաժանէի, եթէ նա այրիանար ու իմս դառնար, այն ժամանակ էլ ինձ դժւար թէ բախտաւոր զգացի։ Ազդապիսի մի բոպէի համար ամբողջ կեանքս կը տայի, բայց հաստատ չըդիտեմ, կը կարողանացի՞ արդեօք այդ բոպէն դարձնել բախտաւորութեան բոպէ Ո՞վ է իմանում, այն նեարդերը, որով մարդիկ բախտաւորութիւն են զգում, արդեօք ընդ միշտ չեն բթացել իմ մէջ։ Շատ կարելի է։ Խսկ այն ժամանակ էլ ինչին պէտքն է այդպիսի կեանքը։

Ճանապարհ ընկնելու նախընթաց օրը գնացել էի զինավաճառնոց։ Խնչ տարօրինակ մարդ էր ինձ բեւոլւէր ծախողը։ Եթէ նա զինավաճառ չըլինէր, կարող էր հոգեբանութեան պրոֆեսոր դառնալ։ Խանութը որ մտայ, խկոյն յայտնեցի, որ ինձ մեծ տեսակի մի լաւ բեւոլւէր է հարկաւոր, խսկ թէ ինչ սիստեմի՝ Յոլտի, Սմիտ Ուէսսէնի թէ մի ուրիշի, —այդ ինձ համար մի և նոյնն է։ Ծեր զինագործը մի բեւոլւէր ջոկեց ու հարցրեց։

—Երևի դուք փամփուշաներ էլ կուզենաք։

—Այո, խնդրեմ։

Զինագործը ուշի ուշով նայեց երեսիս։

—Պատեան էլ։

—Ի հարկէ, պատեան էլ։

—Լաւ։ Որ այդպէս է, ձեզ յարմար փամփուշաներ կը տամ։

Ես ակամայից յայտնեցի զարմանքս, խսկ զինագործը շարունակեց։

—Քառասառն տարի է այս գործովն եմ պարապում և քչից շատից մի բան սովորել եմ։ Յաճախ ինձնից զէնք են դնել այնպիսի մարդիկ, որոնք յետոյ դատարկել են իրանց ճակատին։ Եւ ինչ էր

կարծում։ Երբէք չի եղել, որ դրանցից մէկը պատեան էլ գնէր։ Դա միշտ այսպէս է լինում։ տեսնում ես մէկը խանութ է մտնում ու ասում։ «Մի բեռլւէր տւէք»։—Պատեան էլ։—«Զէ, պատեան հարկաւոր չի»։ Դա շատ տարօրինակ երևոյթ է. ով վճռել է իրան սպանել, էլ ինչու պէտք է մի բուրլի խնազի։ Բայց այդպէս է մարդկային բնաւորութիւնը... Կարելի է դրանցից ամեն մէկն ասում լինի ինքն իրան։ «Ի՞նչ եմ անում պատեանը, հօ զլիսով չեմ տալու»։ Բայց նայելով թէ ով ինչպէս է բեռլւէր գնում, ես հասկանում եմ, անձնասպանութիւն գործելու համար է թէ ուրիշ բանի համար։

—Դուք ինձ շատ հետաքրքիր բաներ էք ասում, —ասացի ես։

Ցիրաւի, այդ դիտողութիւնը ինձ շատ բնորոշ երևաց։ Զինագործը շարունակեց։

—Երբոր ես այդ զլիսի ընկայ, սկսեցի հետևեալ միջոցը գործ ածել. երբ մէկը բեռլւէր է գնում առանց պատեանի, այն ժամանակ ես որպէս թէ սխալմամբ մի համարով աւելի փամփուշտներ եմ տալիս։ Եթևլէրը ճակատին դատարկելը հեշտ բան չի։ Դրա համար հարկաւոր է սարսափելի կենդրոնացումն ու անվեհերութիւն։ Ինչ մարդ պէտք է լինի, որ սաւը քրտինքը վրայից չըկաթի... Վերջապէս մարդ վճռում է ու բեռլւէրը վերցնում։ Հէնց այդ ժամանակ սատանայի պէս փամփուշտները չեն մտնում... Ինչ արած, ճար չըկայ, գլուխը որ քարովն էլ տայ, պէտք է մինչեւ միւս օրը սպասի... Իսկ ինչ էք կարծում, հեշտ բան է երկրորդ անգամ սիրտ անել։ Ոչ մի մարդ, որ միանգամից կեանքին վերջ կը դնէր, մի անգամ մահի երեսը աեսնելուց յետոյ, միւս անգամ էլ սիրտ չի անիլ Եղել են այնպիսիները, որ միւս օրը եկել՝ պատեան են գնել... Իսկ իմ ծիծաղս էր միայն գալիս։ «Առ պատեան և ողջ ու առողջ ապրիր»։

Այս խօսակցութիւնը նրա համար եմ գրում, որ ամեն բան, ինչ որ վերաբերում է անձնասպանութեան, այժմ ինձ սաստիկ հետաքրքրում է, իսկ ծերունի զինազործի ասածները ինձ երևաց որպէս այս գործին վերաբերեալ հետաքրքիր մարդկային դոկումէններ։

27 լունիսի.

Աէկ-մէկ միտս եմ բերում, որ Անելիկան ինձ սիրում էր, որ ես կարող էի նրա հետ պասկւել ու վայելել վերին աստիճան պայծառ ու բախտաւոր կեանք, որ այդ բոլորը ինձնից էր կախւած և որ այդ բոլորը ես եմ փչացրել շնորհիւ իմ կենսական անընդունակութեան։ Եւ այն ժամանակ ինձ ու ինձ հարցնում եմ. չլինի թէ խելագարւում եմ, և յիրաւի՞ կը կարողանայի՞ Անելիկային տիրանալ։ Բայց ես հիանալի կերպով ու կարգով յիշում եմ բոլոր պատահածը, մեր ծանօթութեան բոպէից սկսած մինչեւ այսօր... Ըստունել, որ այդ կինը կարող էր իմը լինել, ինձ հաւատարիմ լինել, ինչպէս հաւատարիմ է այն մարդուն, և դեռ հարիւրազատիկ աւելի, որովհետեւ ինձ սրտանց կը սիրէր... Այս, իսկ որ բնածին անընդունակութիւն։ Բայց թէկուզ հէնց այդ բանը իւձ բոլորովին արդարացնէր իմ աշքում, ինձ ինչ օգուտ դրանից, եթէ այդ արդարացումից սիրաս մի մտզաշափ չի մխիթարւում։ Սիրաս մի քիչ միխթարում է այն միտքը, թէ ինչպէս այլասեռւած տոհմերի, նոյնպէս և նոր ու թարմ ցեղերի սերունդները միենոյն վախճանը կունենան՝ բոլորին էլ միակերպ հողով կը ծածկեն... Այդ փոքրացնում է իմ ու այսպէս կոշւած կորովի մարդկանց տարբերութիւնը։ Ինձ պէս արարածների բոլոր դժբախտութիւնը նրանց բացառիկ լինելու մէջն է կայանում։ Խ'նչ յիմար գաղափար ունեն ոչ միայն վիստասանները, այլ մինչեւ անգամ հոգեբաններն ու վիզիոլոգները այլասեռւած ցեղերի մասին։ Նրանք երեւակացում են, որ մարդ իւր ներքին կենսական անընդունակութեան համապատասխան միշտ ունենում է վիզիբական հաշմութիւն, կարծ հասակ, թոյլ մկանունք, սակաւարիւն ուղեղ ու թուլամտութիւն։ Կարելի է երբեմն հէնց այդպէս է լինում, բայց այդ ընդհանուր կանոն շինել — աններելի սխալ ու պեղանտական կարճամտութիւն կլինի։ Այլասեռւած ցեղերի ոչ թէ կենսական ոյժերն են պակաս, այլ այդ ոյժերի մէջ ներդաշնակութիւն չկաց։ Ես ինքս վիզիբակապէս կորովի մարդ եմ, թուլամիտ չեմ, և իմ շըջանից շատերին եմ ճանաչում, որոնք հինաւուց արձանների պէս էին կազմւած, ընդունակ ու տաղանդաւոր էին, որոնք, սակայն, ապրել չեն կարողացել ու վատ վախճան են ունեցել զարձեալ այն պատճառով, որ նրանց շատ մեծ կենսա-

կան ոյժերի մէջ չի եղել հաւասարակշառութիւն։ Մեր մէջ այդ ոյժերը նմանում են այն վատ կազմակերպւած հասարակութեանը, ուր յայտնի չէ, թէ որտեղից է սկսում մէկի իրաւունքը ու որտեղ վերջանում միւսի իրաւունքը։ մենք անկարգութեամբ ենք կենում, իսկ բոլորին յայտնի է, որ անկարգութեամբ կենալ չի կարելի։ Այդ ոյժերից իւրաքանչիւրը միայն իւր կողմն է քաշում, իւր համար է աշխատում ու յաճախ ընկճում է մնացած բոլոր ոյժերը, և ահա սրանից են յառաջանում տրագիկական բացառականութիւններ։ Ես այժմ հիւանդ եմ այդպիսի բացառականութեամբ, որի շնորհիւ ինձ, բացի Անելկայից, ոչինչ չի հետաքրքրում, ոչինչ չի զբաղեցնում, և ինձ աշխարհից բոլորովին կտրւած եմ զգում։ Բայց մարդիկ չեն հասկանում, որ այդ՝ ներդաշնակութեան բացակայութիւնը ու կենսական ոյժերի անիշխանութիւնը աւելի ծանր հիւանդութիւն է, քան ֆիզիկական ու բարոյական անարիւնութիւնը։ Ահա հանելուկի լուծումը։ Առաջ մեզ փրկում էին կեանքն ու հասարակական պայմանները, որովհետեւ մեզնից գործ էին պահանջում ու որոշ աստիճան հարկադրում էին գործել։ Այժմ, երբ մենք հեռացել ենք կեանքից, երբ փիլիսոփայութիւնն ու կասկածը թունաւորում են մեզ, մեր հիւանդութիւնը աւելի է սաստկանում այդպիսի հակառողջական պայմաններում։ Վերջապէս այնտեղ ենք հասել, որ մեր մէջ չի մնացել գործելու ընդունակութիւն, այլ միայն խանդեր, դրանից է որ մեզնից ամենաշատ օժտածների վերջը խելագարութիւնն է լինում։ Այն բոլորից, ինչ որ կազմում է մարդու կեանքը, մեզ միայն կինն է մնացել, և երկուսից մէկն է լինում։ կամ մեր կենսական դրամագլուխը կոսէկ առ կոսէկ անառակութեան վրայ վատներով, տնաքանդ ենք լինում, կամ թէ բռնելով մի աքրից, ինչպէս անդունդի եղբին աճող ոստից, կախ ենք ընկնում օդի մէջ, ացնքան աւելի ենք ընտրում մեզ ջարդ ու փշուր լինելու վտանգին, որքան աւելի ենք ընտրում մեզ համար ասօրինի սէրը, որ հէնց իւր էութեան մէջ պարունակում է տրագիկական սաղմեր։

Գիտեմ, որ իմ սէրը զէպի Անելկան վատ վախճան կունենաց, և այդ իմանալով հանդերձ, չեմ փորձում մինչև անզամ դիմադրել զգացմունքիս, որովհետեւ ամեն դիմադրութիւն վերջ ի վերջոյ նոյնպէս կորասարեր կը լինի ինձ համար։

28 լուսիսի.

Լողանալը և մանաւանդ այստեղի թարմ օդը օդնում են պանի Ֆելիքսին: Նա օր օրի վրայ աւելի առողջանում է և ինձնից աւելի ու աւելի շնորհակալ լինում, որովհետեւ նրան այնպէս եմ հոգում ու խնամում, ինչպէս հարազատ մօրս: Անելկան ազդ բոլորը նկատում է և չի կարող ինձ նոյնպէս շնորհակալ չլինել, բայց ևս հաւատացած եմ, որ շնորհակալութեան հետ միասին նրա սիրաը գնալով պէտք է դառնութեամբ լցւի: Այդ նրան դաշտափար է տալիս այն մեծ երջանկութեան մասին, որ մենք բոլորեքեան կունենացինք, եթէ լինէր այն, ինչ որ կարող էր լինել: Այժմ ես բոլոր ապացուցներն ունեմ, որ նա կրոսկիցկուն չի սիրում: Նա նրան հաւատարիմ է ու հաւատարիմ կը մնայ, բայց նրանց երկուսին միասին տեսնելիս, Անելկայի երեսին խոնարհութեան ու դժկամութեան հետքեր եմ նկատում: Տեսնում եմ, որ ամեն անդամ, երբ մարդը, որ գուցէ իսկապէս սիրում է, կամ գուցէ միայն ցանկանում է, որ իրանց սիրող ամուսիններ համարեն, գգւում է նրա ձեռները, շցում է մազերը, համրուրում ճակատը,—նա, այդ ինձ համար անկասկածելի է, ուրախութեամբ գետինը կը մանէր, միայն թէ իմ ու ուրիշների ներկայութեամբ չենթարկւէր այդ գգւանքներին: Սակայն նա տանում է ու պարտաւոր է ժապավ, ես էլ եմ տանում ու նոյնպէս ժպտում, միայն սիրա հովացնելու համար երեակայութեամբ ձեռքս կոխում եմ ներս ու դալարում եմ աղիքներս: Մէկ-մէկ մտքովս անցնում է, որ այդ քրմուհին, երբ մարդու հետ առանձին է մնում, անշուշտ աւելի ազատ է լինում և շատ էլ չի աշխատում իրան զսպել... Բայց ես զգուշանում եմ այն երջանկութիւնից, որ ստանում եմ այգպիսի մտքերից, որովհետեւ զգում եմ, որ հերիք է մի կաթիլ էլ, որ ես հաւատարակըշութիւնս կորցնեմ և էլ իմ գլխիս աէրը չինեմ: Իմ վարմունքը սարսափելի է թէ Անելկայի և թէ ինձ համար: Իմ սէրը ատելութեան, արհամարհանքի ու հեղնութեան ձեւ է ընդունում: Այդ տանջում ու վախեցնում է Անելկային: Մէկ-մէկ նա այնպէս է նայում երեսիս, կարծես թէ ուզում է ասել՝ «ինչնվ եմ մեղաւոր»: Ես էլ եմ յաճախ կրկնում՝ «ինչնվ է նա մեղաւոր ու սակայն չեմ կարողանում: Աստւած վկայ, չեմ կարողանում նրան ուրիշ կերպ

վերաբերւել, Որքան աւելի եմ նրան կաշկանդւած ու ձնշւած տեսնում, այնքան աւելի է սիրոս զայրովթով լցւում նրա, Կրոմիցկու, իմ ու բոլոր աշխարհի դէմ: Այդ զգացմունքը նրանից չէ, որ իմ մէջ կարեկցութիւն չկայ դէպի մի նոյնքան զժբախտ արարած, որքան որ ես եմ: Սակայն ինչպէս ջուրը փոխանակ հանդցնելու սաստիկ կերպով բորբոքւած հրդէնը, աւելի ևս բոցավառում է նրան, այդպէս էլ իմ մէջ բոլոր զգացումները աւելի ևս սաստկացնում են յուսահատութիւնս: Երբոր ես արհամարհանք եմ ցոյց տալիս դէպի՝ ինձ համար միակ սիրելի կինը, երբ որ միայն զարոյթ ու ծաղը եմ զգում դէպի նա,—դրանով ինձ նոյնքան եմ վիրաւորում, որքան և նրան, դեռ մինչև անդամ աւելի, —որովհետեւ նա ընդունակ է ինձ ներելու, բայց ինքս ինձ երբէք չեմ ներիլ:

29 Էռնիախ.

Կրոմիցկին նկատել է, որ իմ ու իր կնոջ մէջ մեծ դժգոհութիւն կայ և այդ բացատրում է իրան արժանի ձևով: Կարծում է ես նրա համար եմ Անելկացին ատում, որ նա իրան զերալդասել է ինձնից: Նա ինձնում տեսնում է միայն վիրաւորուած ինքնասիրութիւնից յառաջացած ատելութիւն և ուրիշ ոչինչ: Պէտք է... ամուսին լինել այդպէս մոտածելու: Համար: Այդպիսի կարծիք կազմելով, նա աշխատում է փոխարէնը վարձատրել Անելկացին կրկնակի գորովանքով, իսկ ինձ հետ վարում է մեծահոգի յաղթողի ներողամութեամբ: Միայն ինքնասիրութիւնը կարող է մարդկանց այդքան յիմարացնել: Ինչ տարօրինակ մարդ է: Ամեն օր գնում է Շտրաու-Բենդեր հիւրանոցը, զաղտագողի դիտում է Վանդելբանի տակ զրօննող զոյգերի յետեկից, մի տեսակ ուրախութեամբ ամենավատ ենթադրութիւններ է անում նրանց մասին. իւր փոտած ատամները բաց արած ծիծաղում է ըստ իւր դիտողութեան խարւած ամուսինների վրայ, և ամեն անդամ, երբ այդպիսի մի նոր գիւտ է անում, այդ նրա քէֆը այնպէս է բերում, որ ժամաւայ ընթացքում տասը-քսան անդամ մօնոկլը աչքից հանում է և նորից աչքը դնում: Եւ այդ նոյն մարդը, որ ամուսնական անհաւատարմութիւնը միայն յարմար առիթ է համարում սրախօսելու համար, նոյն բանը ամենամեծ և ամենասարսափելի յանցանք կը համարէր, եթէ որ

գործը իրան վերաբերէր։ Քանի որ այդ ուրիշներին է վերաբերում, —նրա համար լոկ Փարս է, բայց հէնց որ իրան վերաբերի, նա կըսկսի երկնքի վրէժմնդութիւնը հայցել։ Խնչնե, յիմար։ Ով ես դու։ Մօտեցիր հայելուն, նայիր շնորհիդ, տես քո մօնղոլական աշքերը, քո մազերը, որ կարծես հրէական թասակ լինի, քո մօնղին ու քո երկար ոտները. նայիր քո ներսը, զննիր հոգիդ ու տես, որքան ողորմելի է քո խելքը, որքան գուեհիկ է քո բնաւորութիւնը, և ասա, պարաւաւմք է արգեօք Անելկայի պէս կինը գէթ մի րոպէ հաւատարիմ լինիլ քեզ։ Ի՞նչ եղանակով դու նրան մօտեցար, ֆիզիքական ու բարոյական բարու։ Արդեօք աւելի շուտ հրէշաւոր ու բնութեան հակառակ չի այն, որ դու նրա մարդն ես։ Եթէ Դանաւէի Բէաթրիչէն պսակւէր Ֆլորենցիայի վերջին գուեհիկի հետ, էլի Անելկայից աւելի լաւ ընտրութիւն արած կի լինէր...

Ըստհատեցի գրելս, որովհետև դարձեալ սկսում եմ գրգռւել, դարձեալ կորցնում եմ հաւասակշուութիւնն... իսկ ես ինչ լաւ քարցել էի։ Սակայն Կրոմիցկին թող դարս չանի, ճիշդն ասած՝ ես ինձ նրանից բարձր չեմ դասում։ Եթէ մինչև անդամ ինձ համարէի աւելի ազնիւ մետաղից ձուլւած, էլի շատ ուրախանալու բան չէի ունենալ, քանի որ իմ վարմունքը Կրոմիցկու վարմունքից աւելի վատ է։ Նա կարիք չունի իմ առաջը կեղծելու, բայց ես պէտք է նրա առաջը կեղծեմ, նրան յարմարւեմ, խարեմ ու ի նկատի առնեմ նրան, ծածկւեմ նրանից ու որոգայթներ լարեմ նրա դէմ։ Փոխանակ նրա կոկորդից բռնել—խեղղելու, յիշասակարանիս մէջ զըրպարտում եմ նրան—դրանից էլ աւելի գուեհիկ վարմունք։ Այլպէս՝ սորուկն էլ իրան գոհացած է համարում, երբ որ ակրոջ յետևից ծածուկ խօսում է։ Անշուշտ Կրոմիցկին երբէք իրան այնքան չնշին չի զգացել, որքան ես էի ինձ զգում, երբ հազար ու մի սուտ ու մուտ պատճառներ էի հնարում նրան Անելկայի սենեակից որքան կարելի է հեռու տեղաւորացնելու համար։ Դեռ այդ էլ չըցածողեց ինձ, նրա մի հասարակ խօսքը՝ թէ ես կամենում եմ կնոջս մօտ լինել, որ նա ասաց ամենայն անկեղծութեամբ, քանդեց իմ բոլոր ծրագիրները։ Եւ այժմ նա ապրում է էկնոջա մօտ։ Բացի այդ ինձ համար անտանելի է, որ Անելկան հասկանում է իմ իւրաքանչիւր վարմունքը, գլխի է ընկնում, թէ ինչ է նշանակում իմ իւրա-

քանչիւր խօսքն ու դիտաւորութիւնը։ Խնձ այնպէս է թւռւմ, որ յաճախ նա իմ տեղակ ամաչում է։ Այդ բոլորը միասին վեր առած կազմում են իմ հանապազօրեալ հացը։ Զեմ կարծում, որ երկար կարողանամ տանել, որովհետև դրութեանս բարձրութեան վրայ չեմ գտնուում, կամ այլապէս ասած, այնքան լիրը չեմ, որքան պահանջում են ինձ շրջասլատող պայմանները։

30 լունիսի.

Այսօր պատշգամբից լսեցի Կրոմիցկու ու Անելկայի խօսակցութեան վերջը։

—Ես,—ասում էր Կրոմիցկին,—ինքս կը խօսեմ նրա հետ, բայց դու ել քո կողմից պէտք է հօրաքրոջդ ասես, թէ դործը ինչ դրութեան մէջ է։

—Որ մեռնեմ չեմ կարող, —պատասխանեց Անելկան։

—Բայց ես շատ եմ խնդրում քեզնից, —շեշտելով ասաց Կրոմիցկին։

Չցանկանալով ակամայ վկայ լինել այդ խօսակցութեան, ես ներս մտայ: Անելկայի երեսի վրայ նկատեցի մեծ անբաւականութիւն, որ նա ինձ տեսնելով աշխատեց ծածկել։ Կրոմիցկին բարկութիւնից սպրդնել էր, բայց ժպտալով ձեռքը մեկնեց ինձ։ Մի բոսէ վախենում էր, թէ չլինի Անելկան ամեն բան ասել է մարդուն, —վախենում էր ոչ թէ Կրոմիցկուց, այլ որ նա կարող է Անելկային ուրիշ տեղ տանել ու ինձ զրկել իմ վշտերից, սոսրացումներից, տանջանքներից։ Զէ որ ես հէնց դրանով եմ՝ ապրում, այլապէս կը մեռնէի սովորից։ Ինչ լինում է լինի, միայն թէ Անելկան միշտ աշքիս առաջը լինի։ Երկար զլուխ էի ճաքացնում հասկանալու համար, թէ նրանք ինչի մասին պէտք է խօսելիս լինէին։ Մէկմէկ ինձ շատ հաւանական է թւռում, որ Անելկան մարդուն իմ մասին մի բան ասել է, բայց այն ժամանակ Կրոմիցկու վարմունքը ինձ հետ իսկոցն պէտք է փոխւէր, մինչդեռ նա համարեա առաջւանից աւելի քաղցր է վարում ինձ հետ։ Առհասարակ պէտք է ասած, որ եթէ ես նրան ատելիս չլինէի, ոչ մի բանում մեղադրել չէի կարող նրան։ Ինձ հետ նա վարում է քաղաքավարի, քաղցր, միշտ զիջանում է ինձ, ինչպէս նեարդային կնոջ, աշխա-

տում է զրաւել իմ վստահութիւնը։ Նա չի վիրաւարւում, որ երբեմն իրան կոպիս եմ պատասխանում, և յաճախ չափից դուրս անխիղճ՝ կերպով երևան եմ հանում նրա վաս կրթութիւնն ու նեարդերի կոպաւթիւնը։ Զեռքիցս ոչ մի առիթ բաց չեմ թողնում, որ Անելկայի ներկայութեամբ ցոյց տամ, թէ նա որքան գտեհիկ խելքի ու սրտի տէր մարդ է։ Բայց նա շատ համբերող է... գուցէ իմ վերաբերմամբ միայն։ Այսօր առաջին անգամ տեսայ նրա Անելկայի վրաց բարկանալը. նրա երեսը բոլորովին կապտել էր, ինչպէս կապտում է այն մարդկանց երեսը, որոնք կարողանում են սառը կերպով բարկանալ, այսինքն շատ շար կերպով։ Անելկան կարծես վախենում է նրանից, բայց նա ամենքից վախենում է,— այժմ մինչեւ անգամ ինձնից էլ Երբեմն ինձ համար անհասկանալի է լինում, ացդքան եռանդը ացդպէս աղաւնու նման հեղ կինը որտեղից է վերցնում։ Մի ժամանակ նրա վերաբերմամբ մոլորւած էի, կարծում էի թէ այդ եռանդը կրաւորական է և թէ եթէ ուզենամ նրան տիրանալ, նա չի դիմադրիլ։ Ո՛րպիսի սխալ։ Նրա դիմադրութիւնը այնքան աւելի զօրեղ է, որքան աւելի անսպասելի է։ Զգիտեմ ինչի մասին էր նրա խօսքը Կրօմիցիու հետ, բայց միանգամ որ ասել է, թէ չի ասիլ, ինչ որ նա իրանից պահանջում է, կը նշանակի չի ասիլ, թէկուզ երկիւղից զողողալիս լինի։ Եթէ նա իմ լինէր, ես կը սիրէի նրան, ինչպէս կարող է սիրել շունը իւր տիրուհուն։ Ես նրան աչքիս լոյսի պէս կը սպահէի, նրա սոի տակի հողը կը սրբէի, նրան հոգուցս առաւել կը սիրէի։

1 լուլախ։

Իմ խանդոսութիւնը լրբութիւն կը լինէր, եթէ այդ զգացմունքիս մէջ չլինէր կրօնասէր մարդու սրտացաւութիւնը, երբ նրա աչքերի առաջ անպատճում են նրա Աստծուն։ Ես նրա ձեռքը սեղմելուց անգամ կը հրաժարւէի, եթէ կարողանայի զետեղել նրան մի այնպիսի անմատչելի սարի գագաթին, որին ոչ ոք չկարողանար մերձենալ։

2 լուլախ։

Ախալւում էի, չէ, չեմ քարացել. նեարդերիս ժամանակաւոր զրութիւնը հոգեկան մշտական դրութեան տեղ եմ ընդունել։ Ի վեր-

ջոյ, այն ժամանակն էլ կասկածում էի, թէ իմ այդ դրութիւնը երկար կը տեի:

Յ Կովկասի.

Աակայն նրանց մէջ մի բան պատահել է: Երկուսն էլ ծածկում են, որ իրարից դժգոհ են, բայց ես ամեն բան տեսնում եմ: Մի քանի օր է էլ չեմ տեսնում, որ Կրոսիցին, ինչպէս առաջ սովորութիւն ունէր անելու, բռնէր նրա ձեռքերը, առաջ մէկը, յետոյ միւսը աանէր շրթունքին, մազերը շոյէր կամ ճակատը համբուրէր: Ես ուրախացել էի, բայց իմ ուրախութիւնը թունաւորեց ինքն Անելիան: Նկատեցի որ Անելիան կարծես ինքն է ուղում մարդուց ներումն ստանալ, նրա տրամադրութիւնը լաւացնել ու առաջւայ յարաբերութիւնները վերականգնել: Սիրտս կատաղութեամբ լցւեց, որ նշմարում էր իմ վարւելուց Անելիայի հետ երրէք այցեան անսիղճ չեմ եղել թէ նրա և թէ միւնոյն ժամանակ իմ վերաբերմամբ:

Հ Կովկասի.

Այսօր, Վանդելբանից վերադառնալիս, պատահեցի նրան կամուրջի վրայ ջրվէժի հանդէու: Նա յանկարծ կանգ առաւ ու սկսեց մի բան ասել, բայց ջրի ձայնը խեղդում էր նրա ձայնը: Ազդգրուեց իմ բարկութիւնը (ինձ այժմ ամեն բան գրգռում է), և նրան մեր ամարանոցի կողմը տանելով, առանց շտապելու ասացի:

—Զկարողացայ լսել, թէ ինչ էիր ասում ինձ:

—Ես ուղում էի հարցնել, —պատասխանեց նա յուզւած, —ինչու ես ինձ հետ այդպիս վարւում: Ինչու սկի գութ չունես դէպի ինձ:

Այդ խօսքերից արիւնը սիրտս խփեց:

—Միթէ չես տեսնում, —արագ-արագ ասացի ես, —որ քեզ սիրում եմ գժւածի պէս: Խնչպէս կարելի է ալլուեսակ զգացմունքը ամեննեին բանի տեղ չփնել Լսիր, ես այլ ևս ոչինչ չեմ ինդրում քեզնից: Միայն ասա, թէ ինձ սիրում ես, տուր ինձ ըստ հոգին, և ես ամեն բան կը տանեմ, ամեն բանի կը դիմանամ, փոխարէնը կը տամ քեզ իմ ամբողջ կեանքը ու կը ծառայեմ քեզ մինչև իմ վերջին շունչը: Անելիա, դու ինձ սիրում ես, ասա, հմ: Դու կը փրկես ինձ այդ մի խօսքով, արտասանիր այդ խօսքը:

Անելկան կանգնած էր տուաջիս գունատ, ինչպէս ջրվէժի փըր-փուրը: Ինձ թւաց, թէ մի սառնաբեր քամի փչեց նրա վրայ և նրա արինը երակներում սառցրեց: Մի բոպէ կարողացաւ ոչ մի խօսք արտասանել, յետոյ մեծ ճիգ գործ դնելով պատասխանեց.

—Նզաշնում, պաղասն մեմքեզ, մի խօսիր ինձ հետ ալդպէս:
—Ռւրիմն դու ինձ երբէք չես ասի այդ խօսքը:
—Երբէք:

Տեսնում ես որ դու գութ չունես...

Խօսքս լնզհատեցի: Յանկարծ մոքովս անցաւ, որ եթէ այդ խօսքը նրանից կրոմիցկին պահանջէր, մերժումն չէր սուանալ: Այդ որ մոքովս անցաւ, յուսահատութիւնիցս ու կարողութիւնիցս ականջներս տժժացին ու աչքերս շաղւեցին: Գլուխս բոլորովին կորցրի: Այսքանը զիտեմ միայն, որ այնպիսի սարսափելի ու ցինիկական խօսքեր ասացի նրա երեսին, որ ոչ մի տղամարդ սիրտ չէր անիլ ասել անզաշտպան ինոչ: Ես ուղղակի ամաչում եմ այդ խօսքերը դրի անցնել: Երազի ոլէս յիշում եմ, որ նա մի բոպէ նայեց զարմացած ու վախեցած աչքերով, յետոյ թեքիցս բռնելով ու ձեռքս թափ տալով նեարդայոյզ կերպով հարցրեց.

—Լէօն, ինչ է պատահել քեզ, Լէօն...

Իսկ ինձ այն էր պատահել, որ ինելքս բոլորովին կորցրել էի: Ես ձեռքս խլեցի նրա ձեռքից ու մի կողմ գնացի: Նրբ մի քանի բոպէից յետոյ նոյն տեղը վերադարձաց, Անելկան այլ ևս չկար: Այն ժամանակ միայն մի բան հասկացաց, որ ժամանակը հասել է, որ պէտք է վերջ տալ: Այդ միտքը իսկոյն դարձաւ մի տեսակ փայլուն ձեղք այն խոր խաւարի մէջ, որ պատում էր իմ դլուխը: Այդ մի տարօրինակ դրութիւն էր միակորմանի ինքնագիտակցութեան: Ես ինձ հաշիւ չէի տալիս, թէ ինչ է պատահել: Ես համարեա մոռացել էի թէ իմ և թէ Անելկայի գոյութեան մասին, բայց մահւան մասին մոտածում էի ոչ միայն անխռով հոգով, այլ բոլորովին հանգիստ սրտառվի: Օրինակ շատ լաւ հասկանում էի, որ եթէ ժայսի վրայից ինձ անդունդը գցեմ, դա մի դժբախտ պատահար կը համարւի, բայց եթէ սենեակում անձնասպանութիւն գործեմ, հօրաքոյրս դրանից դարդարահան կը լինի: Աւելի տարօրինակ էր այն, որ այդ բոլորի մասին մոտածելիս, ամենւին ցանկութիւն չէի զգում

այդ միջոցներից մէկն ու մէկն ընտրել, կարծես դատողութեանս և կամքիս ու նրանից բզիսող արարմունքներիս մէջ եղող կասլը կարւած լինէր; Բոլորովին համոզած լինելով, որ աւելի լաւ է ինձ ժայռիցը վայր գցեմ քան թէ բեւոլւերով անձնասպանութիւն գործեմ; այնու ամենայնիւ գնացի տուն բեւոլւերս բերելու; Ինչո՞ւ Զգիտեմ; Գիտեմ միայն, որ սաստիկ շտապում էի և քանի ոյժումս կար սանդուկքներից արագ վեր բարձրանալով, սկսեցի որոնել այն չեմոդանիս բանալին, որի մէջն էր բեւոլւերը; Յանկարծ սանդուկքներից արագ-արագ վեր բարձրանալու ոտնաձայն հասաւ ականջիս և անձնասպանութեան միտքը գլխից հանեցի Մաքովս անցաւ թէ գուցէ Անելկան լինի, որ երեխ գուշակել է իմ միտքը և շտապում է իսանգարելու ինձ; Դուռը բացւեց և շէմքի վրայ երևաց հօրաքոյրաւ:

— Լէօն, — գոչեց նա խեղուած ձայնով, — վազիր շուտով բժշկի յետեկց, Անելկան հիւանդ է:

Սյդ որ լսեցի, ամեն բան մոռացայ, ամարանոցից գլխարաց դուրս վազեցի ու քառորդ ժամից յետոյ վերադարձաց բժշկի հետ; Մէնք որ եկանք, արդէն բոլորը հանգստացել էին; Եմիշկը գնաց Անելկացի մօտ, իսկ ես հօրաքոյջ հետ մնացի պատշգամբում ու սկսեցի հարցնել նրանից թէ ինչ է պատահել:

— Սրանից կէս ժամ առաջ, — ասաց հօրաքոյրա, — Անելկան տուն վերադարձաւ այնպէս կարմրատակած դէմքով, որ ես ու Ցելինան իսկոյն հարցրինք թէ ինչ է պատահել; «ոչինչ», «ոչինչ», պատասխանեց անհամբեր կերպով, բայց տեսնում ենք որ ճիշտ չէ ասում; Ցելինան պահանջում էր որ ճիշտն ասի; Այն ժամանակ Անելկան բարկացաւ (նրան այդպէս կեանքումս առաջին անդամն էի տեսնում) ու գոռալով ասաց՝ «ինչո՞ւ ինձ այստեղ բոլորը տանջում են», — յետոյ սկսեց զղաձդւել ու հետերիկաբար ծիծաղել; Մէնք սաստիկ վախեցանք, և ես վազէվազ եկայ քո մօտ; Այժմ, փառք Աստծու, ամեն բան անցել է; Խեղճը յետոյ լաց էր լինում ու մեզանից ներողութիւն խնդրում իւր դիւրագրգռութեան համար:

Ես լուռ էի, որովհետեւ սիրտս կորատում էր; Հօրաքոյրս մի քանի անդամ գնաց եկաւ պատշգամբում, ի վերջոյ կանգ առաւ առաջիս և թևերը կանթելով ասաց.

—Գիտե՞ս ինչ է իմ կարծիքը, որդիս: Մենք բոլորս այդ կրո-
միցկուն այնպէս չենք սիրում ինչպէս պէտք է, որովհետև Յելինան
էլ նրան հազիւ է տանում: Զարմանալի բան է, նա ամեն կերպ
աշխատում է մեր աշքը մտնել, բայց նրա երեսհարքը կարծես ան-
կու հիւրի երեսհարք լինի... Այդ լաւ բան չի մեր կողմից: Անել-
կան ամեն բան տեսնում է և, ի հարկէ, տանջուում...

—Դուք կարծում էք, որ Անելկան նրան այդքան սաստիկ է
սիրում:

—Դու էլ հէնց իսկոյն «սաստիկ, սաստիկ»... Սիրում է, որով-
հետեւ իւր մարդն է, և բնական է որ նրա վասն է գալիս, որ մենք
նրա հետ արհամարհանքով ենք վարւում:

—Ախար ձվ է նրա հետ արհամարհանքով վարւում: Իմ կար-
ծիքով Անելկան բախտաւոր չի նրա հետ—ահա բանի էութիւնը:

—Ասուած մի՛ արտացէ,—պատասխանեց հօրաքոյրս: Ձեմ
վիճում, նա կարող էր աւելի լաւ մարդ առնել, բայց ար-
դեօք հիմք կայ այդքան վատարանելու նրան: Նա երկում է որ
սիրում է Անելկային... Ճշմարիտ է, Յելին-ոն չի կարողանում նե-
րել, որ նա Գլուխովը ծախեց, ես էլ այդ չեմ մոռանալ երբէք,
բայց Անելկան միշտ պաշտպանում էր նրան:

—Կարելի է համոզմանը հակառակ:

—Թէկուզ հակառակ: Այդ աւելի ապացոյց է, որ նա նրան
սիրում է: Խակ ինչ նրա դործերին է վերաբերում, դժբախտաբար
ոչ ոք լաւ չը գիտէ, թէ ինչ դրութեան մէջ են նրա դործերը,
դրանից է որ Յելինան միշտ երկիւղի մէջ է: Բայց ճիշտը որ խօ-
սենք, միթէ միայն հարատութիւնն է մարդու բախտաւոր դարձ-
նում: Ի վերջոյ քեզ արդէն ասել եմ, որ ես Անելկային չեմ մո-
ռանալ և գու դէմ չես լինիլ դրան, ասա, չէ: Մենք երկուսս էլ
պարտական ենք նրա մասին հոգ տանել, սիրելի լէօն, նա այնքան
լաւ, այնքան բարի աղջիկ է, որ բոլորովին արժանի է մեր
ինամքին:

—Ի հարկէ, հօրաքոյր: Ես քոյր չունեմ, և քանի կենդանի եմ:
Անելկան ոչ մի նիւթական հոգս չի քաշիլ:

—Ես այդ զիտեմ և հանդիսու որառվ կը մեռնեմ,—պատաս-
խանեց հօրաքոյրս:

Նա ինձ գրկեց և ուզում էր էլի մի բան ասել, բայց բժիշկը խանգարեց: Նրա ասելով անհանգստանալու ոչինչ չկայ: «Նեարդերի հասարակ գրգռումն է, որ յաճախ պատահում է այստեղի ջրերում նոր լողացողներին, պէտք է առժամանակ թողնել լողանալը, շատ մնալ մաքուր օգում—ամեն բան կանցնի: Կազմւածքն առողջ է, ոյժը՝ շատ, ամեն բան հիանալի կերպով կը վերջանայ: Այդ խօսքերի համար իս այնպէս լցրի նրա զրպանը, որ նա գլուխը ծածկեց ամարանոցի վանդակապատի միւս կողմն անցնելուց յետոյ: Կեանքիցս մի քանի տարի կը տայի, որ գնամ Անելկայի մօտ, նրա ոտները համբուրեմ ու ներողութիւն խնդրեմ այն բոլոր չարիք-ների համար, որ պատճառել եմ նրան: Երդւեցի ուրիշ մարդ զառնալ, համբերութեամբ տանել կրոմիցկու ներկայութիւնը, չվրդով-ւել, մինչև անգամ չորտնջալ: Զղջումն, լիակատար ու սրտանց զղջումն—ահա իմ հոգու ներկայ տրամադրութիւնը:

Կրոմիցկին կայզերվեգում արած հեռաւոր զբօսանքից վերադաւ կէսօրին: Ես խսկոյն փորձեցի նրա հետ քաղցր վարւել: Նա այդ կարեկցութեան նշան համարեց և իրան չնորհապարտ զգաց: Օրւայ մնացած մասը կրոմիցկին ու պանի Յելինան Անելկայի մօտ անց կացրին: Երեկոցեան դէմ Անելկան կամեցել է հաղնւել ու դուրս զալ, բայց նրանք չեն թողել: Այդ առթիւ էլ ինձ թոյլ չուեցի վրդովւել: Ձեմ յիշում, որ երբ և իցէ ինքն ինձ վրայ այդ-պիսի մեծ յաղթութիւն տարած լինէի: Հոգուս խորքում անդադար կրնում էի: «այդ բոլորը քեզ համար է, սիրելիս: Ամբողջ օրը յիմար տրամադրութեան մէջ էի: Երեխացի պէս լացս գալիս էր, և այժմ էլ արտասուքը ինձ խեղդում է: Մի անխելքութիւն արի, այժմ հարիւրապատիկն եմ հատուցանում:»

5 լուլիսի.

Երեկւան իրարանցումից յետոյ այժմ կատարեալ անդորրութիւն է տիրում, ինչպէս փոթորկից յետոյ լինում է խազազութիւն: Ամպերը սպառել են իրանց բոլոր էլեքտրականութիւնը: Ես ինձ թոյլ եմ զգում ֆիզիկապէս ու բարոյապէս, բայց Անելկան լաւ է: Առաւօտեան մենք երկուսով մենակ մնացինք պատշգամբում: Անելկային նստացրի հանգիստ բազիկաթուռի վրայ ու ծածկեցի շալով, որովհետեւ այստեղ առաւօտները ցուրտ է անում:

—Անդին Անելկա, —ասացի ես, —բոլոր սրտովս քեզանից ներողութիւն եմ խնդրում երեկւան ասածիս համար: Ներիր ինձ ու մոռացիր, որովհետև առանց այն էլ ինքս ինձ երբէք չեմ ներիլ:

Նա իսկոյն ձեռքը մեկնեց ինձ, որը ամուր սեղմեցի շրթունքներիս: Որքան կամքի ոյժ ունէի, պէտք է լարէի, որ բարձրածայն չեկեկամ, —այնքան մեծ էր սէրիս ու թշւառութեանս մէջ եղած վիճը: Անելկան այդ շատ լաւ զգում էր և ձեռքը շրթունքներից շուտով չխեց: Նա էլ էր աշխատում խեղդել իւր յուզմունքը, զուցէ և զսպել այն զգացումը, որ նրա սիրու դէպի ինձ էր մղում: Նրա վիզն ու կուրծքը այնպէս էր բարձր ու ցածր անում, որ կարծես այնտեղից ուզում էր զուրս թռչել բարձրածայն հեկեկանք: Նա հասկանում էր, որ ես իրան աշխարհիս երեսին ամեն բանից աւելի եմ սիրում, որ այդպիսի սէր միշտ չի պատահում և ուրիշ պայմաններում այդ սէրը կարող էր երջանկութեան աղբիւր լինել ամբողջ կեանքի համար:

Բայց մի քանի րոպէից յետոյ նա իրան զսպեց ու երեսը պարզեց: Նրա դէմքի վրայ երեսում էին միան խոնարհութիւն ճակատագրի առաջ և անհուն բարօւթիւն:

— Ուրեմն մենք հաշտ ու սիրով կը լինենք այսուհետեւ, հա, — հարցրեց նա:

— Հա:

— Եւ միշտ:

— Ի՞նչ պատասխանեմ քեզ, հոգեակս: Ինքդ լաւ գիտես, ինչ է կատարում մէջս...

Նրա աչքերը նորից մշուշով ծածկեցին, բայց էլի իրան զսպեց:

— Լաւ, լաւ, — ասաց նա, — գիտեմ, զու բարի սիրո ունես...

— Ո՞չ, իս, — անկեղծ զայրովթով բացականչեցի ես, — զիտես արդեօք, որ եթէ քո երեկւան ուշագնացութիւնը չլինէր...

Բայց ես խօսքս չվերջացրի: Յանկարծ մտածեցի, որ իմ կողմից անազութիւն կը լինի շահել նրա սէրը երկիւղով ու սպառնալիքներով: Իմ բանը չէ այդ: Ամօթս սաստիկ եկաւ, մանաւանդ որ նա վախեցաւ, և ուշի ուշով ինձ նայելով հարցրեց:

— Ի՞նչ էիր ուզում ասել:

— Ուզում էի այնպիսի մի բան ասել, որ վայել չէր լինի ինձ և որն այսօր էլ ոչ մի նշանակութիւն չունի:

— Զէ, Լէն, ես ուզում եմ անպատճառ ամեն բան իմանալ, թէ չէ մի բոպէ հանգիստ չեմ լինիլ:

Փամին նրա մազերից մի փունջ գցեց ճակատի վրաց. ես կանգնեցի և ուղղեցի նրա մազերը այնպիսի հոգատարութեամբ, կարծես նրա մայրը լինէի, և ասացի.

— Անեկաս, մի՛ ստիպիր ինձ ասել այն, ինչ որ պէտք է չասեմ: Իսկ եթէ հարցը քո հանգստութեան մասին է, քեզ խօսք եմ տալիս, որ դու ոչ մի պատճառ չես ունենալ անհանգստանալու:

Նա աչքերը վեր բարձրացրեց դէպի ինձ:

— Խօսք տալի՞ս ես:

— Ամենահաստատ ու հանդիսաւոր խօսք. ի՞նչ բաներ են անցնում մոռքովդ:

Մեր խօսակցութիւնը ընդհատեց, նամակաբերը եկաւ և մի դաստաց նամակ բերեց. Կրոմիցկուն՝ Արևելքից, Անելկացին՝ Անեատինակներից (մարդու ձեռքը ճանաչում եմ, նա էր գրել հասցէն) և ինձ կլարացից: Ազնւահոգի կլարան իւր մասին շատ քիչ էր գրել, բայց մանրամասն տեղեկութիւն էր հարցրել իմ կեանքից: Անելկացին ասացի, որ նամակս կլարացիցն է. նա ըստ երևոյթին կամենալով մեր հաշտութիւնը լիակատար դարձնել, սկսեց ձեռ առնել ինձ կլարացի պատճառով: Ես նրա խօսքի տակ չմնացի և ասացի, որ Սնեատինսկին վերջին ժամանակները գլուխը մի քիչ կորցրել է: Մի քանի բոպէից յետոյ մենք ծիծազում ու կատակներ էինք անում: Մարդու հոգին կարծես մեղու լինի, որ մեզը է որոնում մինչև անգամ դառը ծաղիների մէջ: Ամենաղժեախտ մարդն անգամ աշխատում է իւր սեփական տանջանքներից մի կաթիլ բախտաւորութիւն քամել, և այդ նպատակին հասնելու համար օգտում է ամեն մի առիթից, ամենաչնչին պատրւակից: Երբեմն մտածում եմ, որ այդ անզուսպ պահանջը ասպացոյց է, թէ մահից յետոյ մեզ մի բան է սպասում: Ես համոզւած եմ, որ մարդիկ պեսսիմիզմը հնարել են դարձեալ նոյն կարիքին գոհացում տալու համար, միսիթարութեան համար, որ կարելի է ստանալ մարդկացին թշւառութիւնը փիլիսոփայական ֆորմուլացի վերածելով: Այդ գո-

հացումն է դէպի գիտութիւնն ու ճշմարտութիւնը եղած ձգտման, իսկ բախտաւրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ գոհացումների մի շարք:

Գուցէ սէրը այնպիսի առատ ազբիւր է երջանկութեան, որ ամենամռայլ սիրոյ մէջ էլ կան լուսաւոր ճառագայթներ: Ինչ և իցէ, այսօր մեզ համար փայլեց այդպիսի մի ճառագայթ: Ես սկի այդքանի էլ յոյս չունէի, ինչպէս չէի սպասում, որ իւր ցանկութիւններին սահման չդնող մի մարդ, որ ճգում է ամեն բան ունենալ, թշւառութեան ժամանակ համարեա ոչնչով բաւականար: Բայց դրա օրինակը ես հէնց ինքս եմ:

Հազիւ վերջացրել էինք մեր նամակների կարդալը, որ պանի Ցելինան (նա այժմ կարողանում է առանց ուրիշի օգնութեան մօտ գալ) շէմքի վրայ երեւաց ձեռքին մի փոքրիկ նառարան բռնած:

—Ա՛ն, մայրիկ,—Անելիպայի վասն եկաւ, երբ պանը Ցելինան կամեցաւ նառարանը դնել նրա ոտների տակ,—այդպէս բան կանե՞ն:

—Իսկ զու որ ինձ այնքան պահպանում էիր, երբ ես հիւանդ էի,—պատուալիսանեց պանի Ցելինան:

Բայց ես նրա ձեռքից նստարանն առաջ, և ծունկ չոքելով Անելիպայի առաջ, սպասեցի, մինչեւ որ ոտները նստարանի վրայ դրեց: Այդ տեղ մօտ կէս րոպէ, բայց այլ հերիք էր, որ ինձ ամբողջ օրը երջանիկ դարձնէր: Այո, այդպէս է: Ով որ շատ խեղճ է, ապրում է փշրանքներով, և փշրանքները հաւաքելիս ժապում է երախտագէտ սրտով ու արտասուքն աչքերին:

6 Լուլիսի.

Իմ սիրու հողմ է, բայց սիրելու ընդունակ: Այժմ եմ միայն հասկանում Ծնեատինակուն: Եթէ ես խախտած մարդ չլինէի, եթէ հաւասարակշռութիւնս կորցրած չլինէի, եթէ թունաորւած չլինէի սկեպտիցիզմով, ինքնազննութեամբ, եթէ իմ սէրը կանոնաւոր ու անշեղ լինէր, այն ժամանակ ես կը դոնէի Անելիպայի մէջ իմ կեանքի դաւանանքը, որին կը հետեւէին և միւս դաւանանքները: Բայց չդիտեմ, գուցէ ես անկարող լինէի ուրիշ կերպ սիրել, եթէ ոչ միայն խոտորնակի, գուցէ հէնց դրանում է կայանում իմ կենսական անընդունակութիւնը,—այսպէս թէ այնպէս, բայց ինչ որ

պէտք է իմ առողջութիւնն ու փրկութիւնը լինէր, դարձել է ինձ համար մահաբեր հիւանդութիւն ու նզովք: Զարմանալի է, որքան անզամ ինձ նախազգուշացրել են դրա վերաբերմամբ: Կարելի է կարծել, թէ ինձ ճանաչողները նախատեսում էին գլխիս գաղտնիքը: Անդադար մտաբերում եմ, որ Անեատինսկին գրել էր ինձ դեռ այն ժամանակ, երբ ես Պելլիումն էի Դեխտենց մօտ, հետևեալ խօսքերը, և կեանքի ընթացքում մի որ և է բան պէտք է բունի ու ածի. տես, այնպիսի բան չածի, որ թշւառութեան աղբիւր դառնայ քեզ ու քո սիրելիների համար... Այն ժամանակ ծիծաղում էի այդ խօսքերի վրայ, իսկ այժմ տեսնում եմ, որ աւելի լաւ չեր կարելի նախատեսել ապագան: Հայրս էլ շատ անգամ այնպէս էր խօսում, կարծես երբեմն նրա հայեացքը թափանցում էր այն վարագոյրը, որ սքողում է մեզնից ասլազան: Այժմ զուր եմ այդ ցիշում, այժմ այլ ևս ուշ է: Գիտեմ, որ իմ մոտածմունքներից ինձ ոչ մի օգուտ չի լինի, բայց չեմ կարողանում ինձ պահել, որ շմտածեմ, որովհետև ինձ այնքան չեմ խղճում, որքան Անելկային: Նա ինձ հետ հարիւր անգամ աւելի բախտաւոր կը լինէր, քան թէ Կրոմիցիկուհետ: Մինչեւ անդամ ընդունում եմ, որ սկզբում նրան կը սկսէի քննել ու զննել ու մէջը հազար ու մի պակասութիւններ գանել, բայց միեւնոյն է, այդ դէպքում էլ նրան բոլոր հոգովս կը սիրէի: Նա իմս կը լինէր, հետեւաբար կը մանէր իմ եսականութեան բովանդակութեան մէջ: Նրա պակասութիւնների վրայ ես կը սկսէի նայել իբրև իմ անձնական թուլութիւնների վրայ, իսկ ինքն իրան մարդ ամեն ինչ ներում է: մարդս թէկուզ ամենախիստ կերպով էլ ինքն իրան քննադատելիս լինի, այնու ամենայնիւ չի դադարում ձգտել դէպի այն, որ իրան ձեռնառու է, հետեւաբար և չի դադարում ինքն իրան սիրելի լինելուց: Այդպէս ինձ սիրելի կը լինէր և Անելկան, իսկ քանի որ նա ինձնից հարիւրապատիկ լաւ է, ժամանակով կը դառնար իմ պարծանքս, հոգուս ամենալաւ, ամենաազնիւ մասը, և ես կը համոզւէի, որ իմ կրիտիկային տեղ չի մնում նրա մօտ—և կընդունէի նրա հաւատը ու կը փրկւէի նրա շնորհիւ: Այդ ամենը Հքացաւ, փչացաւ ու դարձաւ տրագեդիա ինձ համար:

7 լուլիսի.

Կարդում եմ կրկին երեկւան գրածս և ինձ զարմացնում են վերջին խօսքերս, թէ սէրս, որ եթէ շխտակ սէր լինէր, կարող էր փրկութիւն դաւնալ ինձ համար, չարիքի աղբիւր է զարձել... Դժւար է ինձ այդ մաքի հետ հաշտելի Խնչպէս կարող է չարիք ծնել այն սէրը, որ ներշնչում է Անելկայի պէս մաքուր էակը Բայց մի խօսք բացարում է ամեն բան, այն է՝ խեղաթիւր սէրս և վերջոց պէտք է որ ընդունեմ այդ փաստը: Եթէ սրանից երկու տարի առաջ մէկն ի՞ն ձ ասէր, ինձ, որ քաղաքակրթւած մարդ եմ, ունեմ էսթեափկապէս զարգացած նեարդեր ու ապրում եմ քրէական օրէնսդրքին բոլորովին համաձայն հէնց միայն նրա համար, որ բարոյապէս անկարող եմ ուրիշ կերպ ապրել,—եթէ մէկը, կրկնում եմ, ինձ ասէր, որ ես գիշեր ցերեկ կը մտածեմ թէկուղ սպանութեան միջոցով վերացնել մի մարդու, որ ինձ խանգարում է, այն ժամանակ ես այդ տեսակ մարդարէին խելագար կը համարէի: Խսկ այժմ տես թէ որտեղ եմ հասել: Կրոմիցկին խափանում է իմ լոյսը, խլում է իմ հողը, ջուրն ու օդը: Ես չեմ կարողանում ապրել միայն այն պատճառով, որ նա ապրում է, և դրա համար հոգուս մէջ անդադար փափառում եմ նրա մահւան միտքը: Եթէ նա մեռնէր, ի՞նչ պարզ ու կատարեալ կերպով կը լուծեէին բոլոր խճճւած հարցերը, ինչպէս վերջ կը տրւէր բոլոր անբախտութիւններիս: Յաճախ միտք եմ անում, որ եթէ հիպնոզացնողը կարող է ասել իւր մեղիումին՝ «քնիր» ու նա քնում է, ինչն նոյն ոյժը, միայն աւելի մեծ չափով, բաւական չի լինի քնացնելու մէկին յաւիտենական քնով: Վերջերքս վճռեցի բերել տալ զանազան գրքեր հիպնոտիզմի մասին ու գրեցի, որ ուզարկեն, խսկ առ այժմ յակամայից ամեն մի հայեացքովս ասում եմ Կրոմիցկուն՝ «մեռիր»: Եթէ այդպիսի ներազգումը բաւական լինէր, Կրոմիցկին վաղուց աշխարհի երեսից վերացած կը լինէր: Դրա հետեւանքը մինչեւ այժմ այն է եղել, որ նա իւր քէֆին ապրում է և ինչպէս և աւաջ, ելի Անելկայի ամուսինն է, խսկ ես պէտք է բաւականանամ այն համոզմունքով, թէ իմ՝ դիտաւորութիւնները որքան յանցաւոր են, նոյնքան յիմար են, ծիծաղելի ու խելքը դլիմին մարդու համար անվայել, և ես սկսում եմ աւելի ու աւելի արհամարհել ինձ:

Սակայն այդ չի խանգարում ինձ Կրոմիցկուն հիպնոզացնելս
շարունակել Այդ վաղուցւայ պատմութիւնն է, թէ երբ զարգացած
մարդուն ծանր հիւանդութեան ժամանակ բժիշկները հրաժարում
են բժշկելուց, նա դիմում է պառաւական դեղերին, ևս ուզում եմ
իմ ախոյեանին հիպնոտիզմով սպանել, իսկ թէ այդ ցանկութիւնս
աւելի պարզ է ցոյց տալիս իմ ողորմելի լինելս, այդ աւելի ևս
դառնացնում է վիճակս Պէտք է բացի այդ խոստովանել, որ հէնց
որ մենակ եմ մնում, սկսում եմ միտք անել ինձ ատելի մարդու
շքացնելու մասին և քննում եմ այն բոլոր միջոցները, որոնք հնա-
րաւոր են մարդու համար Երկար ժամանակ փայփայում էի նրան
մենամարտի մէջ սպանելու միտքը: Բայց դրանից բան գուրս չի
գալ: Անելկան իւր մարդու սպանողին չի կարող առնել, ուստի
ինչպէս ամենասովորական յանցաւոր, սկսեցի ուրիշ հնարների մա-
սին մտածել: Եւ որ զարմանալին է, գտայ շատ այնպիսի հնարներ,
որ մարդկային արդարադասութիւնը չի կարող բաց անել:

Յիմար, զատարկ բաներ են. թէօրիական դատողութիւններ են Կրոմիցկին կարող է իրա համար հանգիստ ապրել. այդպիսի մտքեր
իմ մէջ այնքան զօրանալ չեն կարող, որ գործ դառնան: Ես նրան
չեմ սպանիլ, թէկուզ հաւասացած լինեմ, որ դրա համար նոյնքան
պատասխանատու կը լինեմ, որքան մի սարդ սատկացնելու. համար.
Նրան չէի սպանիլ և այն ժամանակ, եթէ միայն երկուսով ապրելիս
լինեինք մի անմարդաբնակ կղզում. բայց եթէ հնար լինէր մարդու
գանգը ինձորի պէս մէջիցը կէս անել ու գուրս հանել միջի թաղ-
նած մաքերը, կերեար, որ չարագործութեան ցեցը ուտում է
ուզեզս: Եւ որ աւելին է, շատ լաւ զգում եմ, որ եթէ ես երբէք
ընդունակ չեմ լինիլ սպանել Կրոմիցկուն, դրա պատճառը ևմի՛ սպա-
նիլը պատւիրանում պարունակւող վսեմ դրդումները չեն: Այդ պատ-
ւիրանը ես արդէն սրտում ոտնատակ եմ աւելի Ես նրան չէի սպա-
նիլ միմիայն այն պատճառով, որ թերեւս ասպետական աւանդու-
թիւնների մնացորդները խանգարէին, այն պատճառով, որ իմ
նուրբ ջղերս ընդունակ չէին լինել այդպիսի մի կոպիտ գործ կա-
տարել, որովհետեւ շատ եմ հեռացել նախնական վայրենի մարդուց,—
մի խօսքով այն պատճառով, որ այդ ինձ համար Փիզիկապէս ան-
հնարին կը լինէր, չէի կարողանալ ինձ ատիպել այդ անել: Բայց

բարոյապէս ես նրան ամեն օր սպանում եմ և ինձ ու ինձ հարցնում, արդեօք պատասխանառու չեմ լինի մարդկալին դաստատանից մի աւելի բարձր դաստատանի առաջ այդ յանցանքի համար այնպէս, ինչպէս եթէ իրօք դործած լինէի այդ յանցանքը:

Գուցէ և լիրաւի, եթէ այնպէս, ինչպէս վերն ասացի, կարելի լինէր բանալ մարդկանց զանգերը, ամենաառաքինի մարդու ուղեղում անգամ այնպիսի մտքեր կը դանէին, որ հետազօտողի մազերը կը փշաքաղւէին: Յիշում եմ, երբ որ երեխայ էի, մի օր այնպէս թունդ ջերմեռանդութիւնս բռնեց, որ առաւօտից մինչև երեկոյ ջերմ կերպով աղօթում էի, և միենոյն ժամանակ ջերմեռանդութեամբ ամենաշատ յափշտակւած րոպէներին մտքովս այնպիսի սրբապիղծ բաներ էին անցնում, որ կարծես քամու բերած լինէին կամ թէ սատանայ մտած լինէր մէջաւ: Նմանապէս պատահել է ինձ պիդտ բաներ մտածել այնպիսի անձանց մասին, որոնց հոգուս չափ սիրում էի և որոնց համար առանց տատանելու կեանքս կը զոհէի: Յիշում եմ նոյնպէս, որ այդ իմ երեխայութեան արագեցիան էր կազմում և որ սաստիկ տակ ջւում էի դրա շնորհիւ: Բայց բանը զրանում չէ: Գալով այդ սրբապիղծ կամ յանցաւոր մտքերին, կարծում եմ, որ ոչ ոք չպէտք է պատասխանառու լինի նրանց համար, որովհետև նրանք ծագում են արտաքին չարիքի դիտակցութիւնից և ոչ թէ այնպիսի չարիքից, որ արդէն պատւասումէ և մարդուս բարոյական օրգանիսմին: Եւ հէնց նրանց արտաքուստ լինելուցն է, որ մարդուս թւում է, թէ սատանան է շշնջում իւր ականջին այդ մտքերը:

Մարդ լսում է և չարից խուսափելով վանում է այդ մտքերը, այնպէս որ թերեւս այդ նրա առաքինութիւնն է ցոյց տալիս: Բայց իմս ուրիշ է: Կրոմիցկուց ազատելու միտքը դրսելից չի ներմուծում իմ ուղեղիս մէջ, այլ հէնց իմ մէջ է զարդանում ու մնում: Բարոյապէս արդէն բոլորովին հսունացած եմ այդ բանի համար, և եթէ չեմ վճռում ու չեմ էլ կարողանայ վճռել սպանութիւն դործել, կրկնում եմ, պատճառը նեարդերս են: Իմ զեխս դերը միայն նրանով է սահմանափակւում, որ ծիծաղում է իմ վրայ շշնջելով ականջիս, թէ եթէ միաքս գործ դարձնեմ, այդ կը լինի եռանդի ապացոյց և ոչ երբէք աւելի մեծ յանցանք:

Ահա այս է այն ճամբարաժանը, որի վրայ կանգնած եմ այժմ; Ամենելին չէի սպասում թէ երբ և իցէ կարող էի կանգնել այդ ճամբարաժանի վրայ և այժմ զարմացած նայում եմ հոգու սխորքը; Զգիտեմ արդեօք իմ շտեսնած տանջանքները քաւում են գոնէ մասամբ իմ անկումը, այնքանը միայն գիտեմ, որ ում կեանքը չի զետեղում այն պարզ կողեքսի մէջ, որին հետեւում են Անելիան ու նրա նման մարդիկ, ում հոգին եռալով բարձրանում թափւում է այդպիսի անօթից, նա պէտք է շաղախւի փոշու ու ցեխի մէջ:

9 Պուլիսի.

Այսօր լնթերցարանում Կրոմիցկին ցոյց տւեց ինձ մի անդիացու, որ նստած էր մի շատ սիրուն կնոջ հետ, և պատմեց ինձ նրանց անցեալի մասին: Գեղեցկուհին ծագումով ոռումանիացի է և առաջ մի մնանկացած վալախիացի իշխանի կինն է եղել, որից անդիացին նրան ուղղակի փողով գնել է Օստենդէում: Այդպիսի պատմութիւներ կեանքումն տասն անգամ լսած կը լինեմ: Կրոմիցկին անդամ ինձ յայտնեց այն գումարը, որով գնւած էր այդ զեղեցկուհին: Նրա պատմութիւնը ինձ վրայ տարօրինակ տպաւորութիւն թողեց: Ինձ ու ինձ մտածում էի՝ «այ քեզ մի միջոց էլ, — ճշմարիտ է խայտառակ միջոց է թէ ծախողի և թէ գնողի համար, բայց և հասարակ: Կինը կարող է ովհնչ չիմանալ պայմանադրութեան մասին, իսկ պայմանը կարելի է քօղարկել ըստ կարելոյն վայելուչ պատրակներով»: Ակամայից սկսեցի մեր դրութեան վրայ նայել այդ տեսակէտից: «Չգամ ու ես էլ...» Ամբողջ գործը ինձ երկու տեսակ էր երեւում: Անելկայի նկատմամբ նայում էի դրա վրայ իրբե մի զզելի սրբալղծութեան վրայ, իսկ Կրոմիցկունկատմամբ՝ այդ միջոցը ոչ միայն կարելի բան էի համարում, այլ և լիապէս յագեցնող իմ ատելութիւնն ու արհամարհանքը, որ զգում էի դէպի նա: Որովհետև եթէ նա համաձայնէր, նրա ստորութիւնը ակներեւ կը լինէր. այն ժամանակ պարզ կը լինէր թէ նա ինչ մարդ է և ինչ հրէշաւոր բան է եղել Անելկային նրան տալը. և ես ինձ իսկոյն անմեղ կը զգայի այն բոլոր ճիգերիս համար, որ գործ եմ դրել նրա կինը ձեռքից խլելու համար: Բայց նա կը համաձայնի արդեօք: Խնդս ինձ ասում էի՝ «ու նրան ասում

ես, այդ պատճառով ինչ վատ բան ասես ենթադրում ես նրա մասին։ Միւս կողմից աշխատելով նրա մասին ամենաօքիեկտիւ կերպով մտածել, չէի կարողանում մոռանալ, որ այդ մարդը ծախել է Գլուխովը, որ նա խորամանկութիւնը Անելզայից լիազօրութիւն է ստացել այդ անելու, որ նա մասամբ խարել է թէ նրան, թէ պանի Յելինային; որ ի վերջոյ դրամանմոլութիւնն է նրա մէջ գերիշխող կիրքը։ Ես չէի միայն, որ նրան փողի վրայ գժւած էի համարում։ Այդ աշքով էին նայում նրա վրայ և Սնեատինսկին, հօրաքոյրս ու պանի Յելինան։ Այդ տեսակ բարոյական ախտը միշտ կարող է պատճառ դառնալ այդ տեսակ անկման։ Միւս կողմից հասկանում եմ ի հարկէ, որ ամեն բան երեխ կախւած կը լինի նրա գործերի դրութիւնից, իսկ թէ ինչ դրութեան են այդ գործերը, ոչ ոք կարգին չգիտէ։ Հօրաքոյրս կարծում է որ լաւ չպէսք է լինեն, իսկ ես կարծում եմ, որ նա իւր ունեցած-չունեցածը ցանել է և այժմ առատ հունձի է սպասում։ Իսկ լաւ հունձ կը լինի արդեօք։ Կրոմիցին ինքն էլ հաստատ չգիտէ, սրանից է նրա մշտական անհանգստութիւնը և այն տասնեակներով նամակները, որ ուղարկում է Արեւելք իւր հաւատարմատար Խւասովյակուն։ Յանկարծ միտքս եկաւ, որ հէնց այդ Խւասովյակու միջոցով կարելի է իմանալ ինչպէս են նրա գործերը։ Իսկց դրա համար պէտք է երկար ժամանակ։ Կարելի է մի օրով Վիէննա գնամ, տեսնեմ բժիշկ Խւասովյակու հետ, որ այնտեղ Կլինիկայում պարապում է, և նրանից մի բան իմանամ։ Անշուշտ երկու եղբայրները միմեանց հետ նամակագրութիւն կունենան։ Իսկ մինչ այդ՝ հարց ու փորձ կանեմ իրան Կրոմիցկուն, բայց որքան կարելի է զգոյշ կերպով, որ նրա սիրաը կասկած չգցեմ։ Ամենից առաջ վաղը նրանից կը հարցնեմ, ինչ կարծիքի է նա այն ուումանիացի իշխանի մասին, որ իւր կնոջը ծախել է անգլիացուն։ Նախաեսում եմ, որ Կրոմիցկին չի ցանկանայ ինձ հետ անկեղծ լինել, բայց ես որքան հնարաւոր է նրան կօգնեմ, իսկ մնացածը ինքս դիմի կընկնեմ։ Այս բոլոր մոքերն ու դիտաւորութիւնները մի քիչ աշխոյժացրին ինձ։ Կրաւորապէս տանջելուց աւելի վատ բան չկայ, և ամեն բան, որ ինձ այդ դրութիւնից հանում է, լաւ է։ Ինձ ու ինձ կրկնում եմ՝ ըգոնէ վաղը կամ միւս օրը մի որ և է բանի կը ձեռնարկեմ, կը փորձեմ

մի որ և է բան անել իւր զգացած սիրոյ համար—և այդ ինձ կազզուրում է։ Կատարեալ թմրածութիւնից յանկարծ տենդային գործունէութեան մէջ եմ ընկնում։ Գործը իմ զիկիս, իմ խելքիս է վերաբերում, որ ես կորցնելու մօտ եմ։ Անելկային աղնիւ խօսք եմ տւել, որ անձնասպանութիւն չեմ գործի, կը նշանակի այդ ելքն էլ փակ է ինձ համար։ Խակ ապրել այնպէս, ինչպէս ապրում եմ, այլ ևս չեմ կարող։ Եթէ իմ բռնելիք ճանապարհը խայտառակ է, յամենայն դէպս աւելի խայտառակ կը լինի կրոմիցկու քան ինձ համար։ Ես նրանց պէտք է միմեանցից բաժանեմ ոչ միայն ինձ համար, այլ և Անելկայի համար։ Անկատակ տենդ ունեմ։ Բոլորին այստեղի ջրերը օգնում են բացի ինձանից։

10 Կովկասի.

Շոք օրեր լինում են մինչև անդամ այստեղ, Գաշտէյնում ինչ սարսափելի տօթ է։ Անելկան սպիտակ ֆլանելէ շոր և հագնում, ինչպէս սովորաբար հագնու։ Են անգլիուհիք lawn-tennis, խաղալու ժամանակ։ Առաւօտան սուրճը խմում ենք թարմ օգում։ Անելկան լողանալուց գալիս է թարմ, լուսափայլ, ինչպէս ձիւն արևի ծագման ժամանակ։ Նրա գողարիկ մարմնի զծերը կակուզ շորի տակից սովորականից աւելի որոշ են երեսում։ Առաւօտեան արևը այնքան պարզ է լուսաւորում նրան, որ հատ-հատ տեսնում եմ նրա յօնքերի բոլոր մազերը, թերթեսունքները և նուրբ այստերը ծածկող աղւամազը։ Մազերը մի քիչ թաց են լինում, բայց այդ փայլից աւելի բացգոյն են երեսում, իսկ բիբերը աւելի ջինջ։ Որքան ջահել է նա, որքան չքնաղ է։ Նրա մէջ է ամփոփած իմ կեանքը, նրա մէջ են ամփոփում իմ բոլոր ցանկութիւնները։ Չեմ գնալ, չեմ կարող։

Նայում եմ նրան ու խելքս կորցնում զմայելելուց ու միւնոյն ժամանակ ցաւից, որ նրա կողքին նստած է մարդը։ Այդպէս երկար շարունակւել չի կարող, —թող նա ոչ ոքի չպատկանի, միայն թէ նրան պատկանած չլինի։ Նա հասկանում է ջղերս գալարող տանջանքը, բայց հասկանում է ոչ այն չափով, որքան հարկաւոր է։ Մարդուն նա չի սիրում, բայց նրա հետ կենացութիւնը օրինաւոր է համարում։ Այդ մտածելիս քիչ է մնում ատամներս զբացնեմ,

որովհետեւ ինձ թւում է, լնդունելով որ այդ օրինաւոր է, նա ինքն իրան ստորացնում է: Խակ այդ չեմ կարող ներել մինչեւ անգամ նրան: Աւելի լաւ կը լինէր մի անգամ մեռնէր պրծնէր: Այն ժամանակ նա իմը կը լինէր, որովհետեւ նրա օրինաւոր մարդը կը մնար այսուեղ, խակ ես ոչ: Այդ պատճառով ես նրա համար աւելի օրինաւոր եմ քան Կրոմիցկին: Երբեմն-երբեմն ինձ տարօրինակ բան է պատահում: Երբ որ ինքս ինձ շատ տանջում-մաշում եմ, երբոր միուր մի ուղղութեամբ լարւած մտածմունքիս շնորհիւ սկսում է տեսնել այնպիսի հեռաւոր տարածութիւններ, որ նորմալ դրութեան մէջ անհնար է տեսնել, վրաս այնպիսի հաւասարիութեան բոլէներ են զալիս, թէ Անելիան ինձ է պատկանում: իմն է կամ իմն է լինելու, — որ երբ այդ դրութիւնից սթափւում եմ, զարմացմամբ եմ մոռաքերում Կրոմիցկու գոյութիւնը: Կարելի է այդ ըսպէներին ես անցնում եմ այն սահմանները, որ սովորաբար ոչ ոք չի անցնում կենդանի ժամանակ, տեսնում եմ բոլոր իրերը կատարեալ, ինչպէս նրանց իդէալն է և ինչպէս պէտք է լինեն արտաքին երեսով թիւներում: Խնչման այդ երկու աշխարհները միմեանց չեն համապատասխանում և ինչպէս կարող են համապատասխանել միմեանց, չգիտեմ: Յաճախ ճգնում եմ վճռել այդ հարցը, զլուխս շշմում է և չեմ կարողանում հասկանալ այդ անհամապատասխանութիւնը, զգում եմ միայն, որ այդ անհամապատասխանութեան մէջն է կայանում անկատարութիւնն ու: արիքը: Այդ զգացմանքը սիրու է տալիս ինձ, որովհետեւ եթէ այդ այդպէս լինի, Անելիայի Կրոմիցկուն պատկանեն էլ չարիքի արտաքայտութիւն կը լինի:

11 լուլիսի.

Կրկին յուսախարութիւն, կրկին խորտակումն իմ ծրագիրների. բայց էլի յուսոյ մի նշոյլ մնացել է մէջս, որ այդ խորտակումը վերջնական չի: Այսօր խօսեցի Կրոմիցկու հետ այն իշխանի մասին, որ ծախսել է իւր կնոջը, և ինձնից մի ամբողջ պատմութիւն հնարեցի, որ Կրոմիցկու անկեղծութիւնը շարժեմ:

Անգլիացուն ու իր գնած կնոջը պատահեցինք ջրվէժի մօտ: Ես իսկոյն խօսք բաց արեցի նրա անսովոր դեղեցկութեան մասին ու վերջն աւելացրի.

— Ալստեղ բժիշկը ինձ պատմեց, թէ ինչպէս է կատարւել այդ առ ու ծախսը: Դու չափից դուքս խիստ ես դադում այդ իշխանի մասին:

— Ամենից առաջ ծիծաղս է գալիս նրա վրայ: — պատասխանեց Կրոմիցկին:

— Կան մեղմացող հանգամանքներ: Նա միայն իշխան չի եղել, այլ և մի մեծ կաշւեգործարան է ունեցել: Նա գործը վարելիս է եղել պարաքով: Յանկարծ կաշվի արտահանութիւնը Ռումանիայից հարեւան պետութիւնները անամսախտի պատճառով արգելում էր Այդ իշխանը տեսնում է, որ եթէ մի առ ժամանակ չդիմանայ, ոչ միայն ինքը կը մնանկանայ, այլ առևն տնաքանդ կանի հարիւրաւոր ընտանիքներ, որոնք հաւատացել իրանց փողը տւել են նրան: Սիրելիս, վաճառականը պէտք է վաճառական լինի: Գուցէ և վաճառականական բարոյագիտութիւնը տարբեր է ընդհանուր բարոյագիտութիւնից, բայց մէկ որ մարդ հաշուել է այդ բարոյագիտութեան հետ...

— Ուրեմն իրաւունք ունի ծախել մինչեւ անգամ իւր կնոջը, — հարցրեց Կրոմիցկին: — Զէ: Մի պարտականութեան համար չպէտք է ոտնատակ տալ միւս, դուցէ աւելի սուրբ պարտականութիւնը...

Կրոմիցկին ոչնչով չէր կարող ինձ այնքան հիասթափեցնել ու զայրացնել, որքան այսպէս կարգին մարդու նման խօսելով: Սակայն ես միանգամբ յուսակուուր չեղայ: Գիտեմ, որ ամենազորմելի մարդն անգամ ունենում է աւելի կամ պակաս ճռճռան ֆրազների պաշար, ուստի շարունակեցի:

— Դու ինկատի չես առնում, որ այդ մարդը աղքատութեան կը մասնէր իրա հետ և իւր կնոջը: Համաձայնիր, տարօրինակ ձեռվ է հասկանում իւր պարտականութիւնները դէպի իւր մերձաւորները այն մարդը, որ յանուն այդ պարտականութիւնների զրկում է նրանց վերջին կտոր հացից:

— Գիտես, ես սկի չէի կարծում, որ դու այդ աստիճան գործնական մարդ կը լինեա:

Իսկ ես ինձ ու ինձ մտածեցի:

« Եիմար, չես հասկանում, որ այդ հայեացքները իմը չեն, այլ ուզում եմ այդ հասկացողութիւնները քո ուղեղի մէջ հալցնեմ, և պատասխանեցի. »

—Ես աշխատում եմ մոնիկ այդ գործարանատիրոջ դրութեան մէջ։ Բացի այդ դու մի բան էլ ուշադրութեան չես առնում։ Կինը կարող էր նրան չսիրել, այլ սիրել իւր այժմեան մարդուն, իսկ նա կարող էր այդ բանն իմանալ։

—Որ այդպէս է մէկը միւսին արժի։

—Այդ ուրիշ հարց է։ Գործը որ խորը քննենք, կը տեսնենք, որ եթէ նա անգիտացուն սիրելով այնուամենայնիւ հաւատարիմ է մնացել իւր առաջւայ մարդուն, այն ժամանակ նա մեր կարծածից թերես աւելի արժի։ Գալով իշխանին, շատ կարելի է, որ նա հէնց լիրը մարդ է, բայց քեզ եմ հարցնում, ի՞նչ պէտք է անի վաճառական մարդը այն դէպքում, եթէ մէկը դայ նրա մօտ ու ասի. «Դուք կրինակի մնանկ էք, որովհետեւ ունէք պարտքեր, որ վճարել չէք կարող, և ունէք կին, որ ձեզ չի սիրում։ Բաժանելիք այդ կնոջիցդ, և ես առաջինը խօսք կը տամ, որ նա կունենայ նիւթական ապահովութիւն ու հնարաւոր բախտաւորութիւն, երկրորդ՝ կը վճարեմ ձեր պարտքերը։ Ախար միայն այդպէս ասում են. ծախեց, ծախեց,— իսկ այդ իսկապէս ի՞նչ ծախել է։ Մտածիր, որ այն վաճառականը ընդունելով այդ պայմանը, միանգամից թէ իւր կնոջն է աղատում դժբախտութիւնից (զեռ հարցէ, արդեօք հէնց այդպէս չպէտք է հասկանան մարդիկ իրանց ճշմարիտ պարտականութիւնները դէպի մերձաւորները) և թէ այն մարդկանցն է աղատում աղաքատութիւնից, որոնք հաւատացել են նրան...»

Կրոմիցկին մի բոլէ մտածեց, մոնոկլը աչքից վայր քցեց ու պատախանեց.

—Սիրելիս, պարծենում եմ, որ գործերում քեզանից աւելի եմ հասկանում, բայց քեզ հետ վէճի բռնւել չեմ կարող, որովհետեւ դու ինձ լեզւակոլս կանես... Եթէ դու հօրիցդ միլիօններ չստանացիր ու փաստաբան դառնացիր, էլի միլիօնների կը տիրանացիր... Դու ինձ գործը այն ձեռվ ներկայացրիր, որ Աստւած վկայ չեմ իմանում ինչ մտածեմ այդ Ռումանիացի սրիկացի մասին, այն գիտեմ միայն, որ կնոջ մասին պայման են կապել, որ, ինչ կուզես ասա, կեղառա բան է։ Այդ մէկ, բայց այդ, քանի որ ես ինքս էլ մասամբ վաճառական եմ, կասեմ քեզ և հետեւալը.—սնանկացած մարդու համար միշտ ելք կայ, կամ՝ նորից փող դատել ու հին պարտքերը

վճարել, կամ թէ չէ առըճանակը ճակատին դատարկել։ Այդպիսով
նա պարոքելը վճարում է իւր արիւնով։ իսկ կնոջը, եթէ կին ու-
նի, ազատութիւն է տալիս և բաց է անում նրա առաջ նոր բախ-
տի դռներ։

Այնպէս կատաղութիւնս եկաւ, որ Աստւած գիտի թէ ին։ կը
տայի, որ նրա ականջին կարողանացի գոռալ՝ «Դու արդէն սնանկ
ես, գոնէ այն կողմից, որ կինդ քեզ չի սիրում։ Տեսնում ես ջըր-
վէժը։ Գեղ քցի այնոեղ ազատիր նրան քեղանից և բաց արա նրա
առաջ նոր կեանքի դոները, ուր նա հարիւրապատիկ աւելի բախ-
տաւոր կը լինի։

Բայց ես լուս էի և աշխատում եի մարսել այն նոր համա-
զույլը (որ ինձ համար շատ ու շատ դառն էր), եթէ ճիշդ է, Կրօ-
միցկին գոեհկահոգի մարդ է, ընդունակ է այնպիսի գործերի, ինչ-
պէս օրինակ Գլուխովի ծախելը կամ կնոջ հաւատը ի չարը գործ
դնելը, բայց իմ կարծածի չափ ողորմելի հոգու տէր չիւ Ես յու-
սախարութիւն էի զգում ու տեսնում, ինչպէս են խորտակում այն
ծրագիրները, որոնց հետ ժամանակաւրապէս կապել էի իմ գոյու-
թիւնը։ Դարձեալ ինձ անճար զգացի, դարձեալ տեսայ առջևս անա-
պատ, դարձեալ մնացի օղում կախւած։

Այնու ամենայնիւ չէի կամենում ձեռքիցս թողնել այդ վերջին
թելը. լաւ հասկանում էի, որ եթէ մի բան կարողանամ անել, լաւ
թէ վատ մի կերպ կապրեմ, հակառակ դէսկըում շատ հաւանական
է, որ կը խելազարեմ։ «Գոնէ հող պատրաստած կը լինեմ ապակա-
ցի համար, —մտածում էի ինձ ու ինձ, —և յամենայն դէսպս Կրօ-
միցկուն կընտելացնեմ Անելկացից բաժանւելու մոքին։ Կրկնում
եմ, ինձ յախտնի չէր, թէ ինչպէս են նրա դրամական գործերը,
բայց գիտենալով, որ առետրական գործերում մնանկալը նոյնքան
հնարաւոր է, որքան հարատանալը, այսպէս խօսեցի։

—Զգիտեմ ասածդ որքան յարմար է վաճառականական բարո-
յականութեան, բայց ուրախութեամբ խոստովանում եմ, որ այդ
կարգին մարդուն վայել խօսքեր են։ Եթէ ասածդ ուզիդ եմ հա-
կացել, գու զգում ես, թէ սնանկութեան դուռը հասած մարդը
իրաւունք չունի կնոջն էլ իւր յետևից աղքատութեան անդունդը
տանել։

—Ես միայն ասում էի, որ կին ծախսվը, երբ էլ լինի, ինչպէս էլ լինի, լիրբ բան է: Ի վերջոց կինը պէտք է վիճակակից լինի իւր մարդուն: Չուզեցինք այն կնոջը, որ համաձայն կը լինի խզել իւր ամուսնական կապերը միայն նրա համար, որ մարդը կորցրել է իւր կարողութիւնը:

—Ասենք թէ կինը չհամաձայնի... Մարդը կարող է գլուխ բերել ապահարզանը կնոջ կամքին հակառակ: Այդ դէպքում ամեն մէկը պէտք է իւր պարտականութիւնը կատարի: Խսկ եթէ կինը տեսնի, որ բաժանւելով բացի այդ կարող է և փրկել մարդուն, եթէ նա իսկապէս իւր պարտականութիւնները հասկացող կին է, պէտք է համաձայնի:

—Այդպիսի բանների մասին խօսելն անզամ մարդու անախորժ է:

—Ինչո՞ւ: Մթղքդ է գալիս ռումանիացին ինչ է:

—Չէ, Ասուած վկայ ես նրան միշտ կեղաստ մարդ կը համարեմ:

—Նրա համար, որ չես կարողանում գործի վրայ օբիեկտիւ կերպով նայել: Բայց այդ զարմանալի չի: Այն մարդը, որի բոլոր գործերը յաջողակ են գնում, երբէք չի կարող հասկանալ մնանիի հոգեբանութիւնը, եթէ որ փիլիսոփայ չի, իսկ փիլիսոփայութիւնը միլիոններ վաստակելու հետ կապւած չի լինում:

Այլ ևս չկամեցայ շարունակել այդ խօսակցութիւնը, որովհետեւ իմ սառորութիւնս ինձ համար էլ չափից դուրս զգւելի էր: Ինձ թւում էր, թէ ցանեցի մի սերմ, գուցէ շատ չնչին ու անզօր, որ կարողանայ աճել, գուցէ ձեռքիս կրկին մի թել կունենամ: Մի հանգամանք ինձ սիրտ էր տալիս: Այն բոպէին, երբ սկսեցի համոզել կրոմիցկուն, թէ նա այն կարծիքին է, որ մնանկացած մարդը պարտական է ազատ թողնել իւր կնոջը, նրա դէքքի վրայ նկատեցի անհանդասութեան ու դժգոհութեան նման մի բան: Նոյնպէս նկատեցի, որ նրա միլիոնների մասին խօսելիս նա կամացուկ հառաջեց: Եաւ շուտ կը լինէր զրանից եղբակացնել, որ նրան մնանկութիւն է սպառնում, բայց ես կարող էի կարծել, որ նրան գործերը շատ էլ յաջողակ չեն, և նվազ զիտի թէ նրան ինչ վախճանի կը հասցնեն:

Եւ ես վճռեցի ամեն բան լաւ տեղականալ: Այդ բոպէին ես

ողարզ զգում էի ինչպէս թէ իմ մէջ երկու մարդ լինի: Մէկն ասում էր Կրոմիցկուն. «Եթէ դու զէթ մի փոքր տառանում ես, ես քեզ կօգնեմ որ վայր ընկնես, և թէկուզ ինքս էլ ամբողջ կարողութիւնից զրկւելու լինեմ, քեզ մի հարւածով կը տապալեմ: Այն ժամանակ ես դորձ կունենամ կոտրած մարդու հետ և կը տեսնենք, արդեօք մի քանի պայմանագրութիւնների դու աւելի մեղմ անուն չես տալ, քան լրբութիւն անունը»: Սակայն դրա հետ մեասին գիտակցում էի, որ գործելու այդ եղանակը իմը չի, ես չեմ դրա մտածողը, այլ չգիտեմ մի տեղ կարդացել թէ մէկից լսել եմ,—և որ իմ լուսահատ գրութիւնս չլիներ, ես այդ միջոցին երբէք չէի դիմի, որովհետեւ նա իմ զզւանքս է բերում ու միանգամայն հակառակ է իմ բնաւորութեանը: Փողը իմ կեանքում երբէք դեր չի խաղացել ոչ իբրև միջոց և ոչ իբրև նպատակ. ինձ անընդունակ էի համարում գործ ածել այդ տեսակ զէնք. զգում էի, ինչ ստորացումն է իմ ու Անելկայի համար մեր յարաբերութիւնների մէջ այդպիսի տարր մտցնելը: Զգւանքս դնալով աճուս էր և ես հարցնում էի ինձնից. «Միթէ այնքան ընկել ես, որ մինչև այլուեղ ես հասել, միթէ այդպիսի ամանից էլ պէտք է խմես: Նայիր տես ինչպէս աւելի ու աւելի ես ստորանում: առաջ սկի մոքովդ էլ չէր անցնի այդպիսի բան, որ ի լրումն ամենայնի, գուցէ քեզ ոչ մի հետեւանքի չհասցնի և միայն քեզ ոոյն իսկ քո աշքին արհամարելի դարձնիս:

Եւ յիրաւի, առաջ ամեննեին դուրս չէր գալիս, երբ հօրաքոյրս խօսք էր բաց անում կրոմիցկու գրամական գործերի մասին ու կասկած յայտնումնրա գործերի յաջողութեան մասին: Նախատեսնելով որ նա գուցէ ինձից երբ և իցէ օգնութիւն խնդրի կամ առաջարկի մասնակցեմ իւր գործերի մէջ, ես միտք էի անում ինչպէս վարեմ այդպիսի դէպքում, և միշտ միենոյն որոշմանն էի գալիս. ինձ խօսք էի տալիս մերժել նրա թէ մէկ և թէ միւս առաջարկութիւնը, —այնքան սիրտս չէր ուզում, որ իմ ու Անելկայի յարաբերութիւնների մէջ փողի հաշիւ խառնւի: Յիշում եմ, որ այդ ապացոյց էի համարում բնաւորութեանս նրբազգացութեան և զգացմանըներիս ազնութեանն: Խոկ ացմբ բանն այնտեղ էր հասել, որ այդ զէնքի օգնութեանն եմ դիմում, կարծես բանկիր եմ եղել ու ամբողջ կեանքում կրիւ եմ մզել փողով:

Բոլորովին հաւասոի կերպով տեսնում եմ, որ իմ վարմունքու մտքերս ինձանից աւելի վատ են, և յաճախ անկարող եմ լինում բացարել, թէ ինչու է այդ ացդպէս լինում հաւանական է նրա համար, որ չեմ կարողանում նեղ ու ծուռ անցքերից մեծ ճամբան զուրս գալ: Ես սիրում եմ մի ազնիւ կնոջ, մեծ է իմ սերը, և ասկայն այդ զուգադրութիւնից յառաջանում են ձախողակութիւններ, կախարդւած շրջաններ, որոնց մէջ փշանում է իմ բնաւորութիւնը, կորչում է անդամ նեարդերիս նրբութիւնը: Առաջ, երբ անկման րոպէներին դէն էի քցում բարոյականութիւնը, մէջս էլի մնում էր մի բան, մի տեսակ էսթէտիկական զգացմունք, որի միջոցով բարին չարից տարբերում էի: Այժմ այդ էլ չի մնացել մէջս, կամ կայ, բայց անզօր է: Այս, եթէ դրա հետ գոնէ կորցրած լինէի և զզւելի լինելու գիտակցութիւնը: Բայց չէ: Նա էլի կայ իմ մեջ նոյն չափով, միայն թէ դարտարել է ինձ սանձահարելուց և ծառալում է միայն տանջանկըներս սաստկացնելուն: Անելկացի սիրուց զատ մէջս ոչնչի համար տեղ չկաց, բայց գիտակցութիւնը տեղի կարօտութիւն չունի: Գիտակցութիւնը բռն է գնում և՝ սիրոյ, և՝ ատելութեան, և՝ վշտի մէջ, ինչպէս Խլիրդը (ռաք) հիւանդ կազմածքի մէջ: Ով իմ վիճակի միջ չի եղել, նա չի կարող հասկացողութիւն ունենալ վիճակիս մասին: Ես, ի հարկէ գիտէի, որ սիրային յուզումներից կարող են ծնել շատ տանջանկներ, բայց այնքան էլ չէի հաւատում: Զէի կարծում, որ նրանք ացդքան իրական ու այդքան անտանելի կը լինին: Այժմ միայն հասկացայ գիտենալ» ու «հաւատուալ» բայերի զանազանութիւնը, այժմ միայն հասկացայ մի ֆրանսիացի հեղինակի այն խօսքերը՝ թէ «մենք գիտենք, որ պէտք է մեռնենք, բայց չենք հաւատում» որ մեռնելու ենքու

12 լուլիսի.

Այսօր երակս տենդացին կերպով է խփում, գլուխս զժժում է: Պատահեց մի դէպք, որի յիշելուց անդամ իմ ամեն մի նեարդս սարսուում է:

Հրաշալի օր էր, իսկ երեկոն աւելի հրաշալի էր. լուսնի լրումն էր: Վճռեցինք զբօսանք անել դէպի Հոփգաշաէյն, միայն Պանի Յելինսան ցանկացաւ տանը մնալ: Հօրաքոյրս, ես ու Կրոմիցկին դուրս

եկանք ամարանոցից. Կրոմիցկին գնաց կառք վարձելու, իսկ մենք մնացինք ու սպասում էինք Անելկային, որը չգիտեմ ինչու ուշացաւ տանը: Նատ որ սպասեցինք չեկաւ, ես վազեցի նրան կանելու և տեսայ նրան ամարանոցի վերին յարկից դեպի պարտէզը տանող ներքին պտուտակածե սանդուղքի վրայ:

Լուսինը լուսաւորում էր ամարանոցի հակառակ կողմը, իսկ այս կողմը թաղւած էր խաւարի մէջ, այդ պատճառով Անելկան կամաց-կամաց էր իջնում սանդուղքներից: Պտուտականման սանդուղքը իջնում է համարեա ուղղահայեաց: Մի բոսէ եկաւ որ իմ զլուխը Անելկայի ոտների տակ գտնեց: Հէնց որ ոտները տեսայ, իսկոյն երկու ձեռքով երկիւզածութեամբ բռնեցի և սկսեցի համբոյներ դրոշմել նրանց վրայ սիրատենչ շրթունքներովս: Գիտէի, որ յետոց տանջանքով պիտի քաւեմ այս մի բոսէ բախտաւորութիւնս, բայց չկարողացայ, ոչ չունեցայ հրաժարւել դրանից: Սակայն վկայ է Աստւած, թէ որքան երկիւզածութիւն կար շրթունքներիս վրայ, որոնց չէի կարողանում հեռացնել այդ սիրելի սուներից, և որքմն տանջանքների վարձատրութիւն էր այդ քաղցր բոսէն: Նթէ Անելկայի դիմադրութիւնը չլինէր, ես նրա ոտը պէտք է դնէի զլիսիս ինշան այն բանի, որ ինքս ինձ յաւիտեան նրա ստրուկն եմ դարձրել Բայց նա իսկոյն յետ քաշեց, իսկ ես վազեցի ներքե ու գոչեցի այնպէս, որ ձայնս հօրպերոջս ականջին համնի.

—Անելկան պատրաստ է, գալիս է:

Նա ուզէր չուզէր, պէտք է սանդուղքից իջնէր, որ նա առանց վախենալու կարող էր անել, որովհետեւ ես նրա առջեկցն էի գնում: Այդ բոսէին եկաւ և Կրոմիցկին ու կառքը բերեց: Անելկան մօտեցաւ մեզ ու ասաց.

—Ես եկայ, հօրաքոյր, ձեզանից ներողութիւն լսնդրելու. մայրիկին չեմ ուզում մենակ թողնել: Դուք գնացեք, իսկ ես ձեզ համար թէյ կը պատրաստեմ:

—Ցելինան իրան հօ շատ լաւ է զզում, —քիչ դժգոհ պատասխանեց հօրաքոյրս, —հէնց նա է այս զրօսանքը մտածել յատկապէս քեզ համար:

—Այո, բայց... —սկսեց Անելկան:

Այդ միջոցին կրոմիցկին մօտենալով մեզ ու տեղեկանալով թէ բանը ինչումն է, չոր-չոր ասաց.

—Խնդրեմ՝ շխանգարէք մեր զբոսանքը:

Անելկան անխօս նստեց կառքը հօրաքրոջս կողքին: Չնայելով որ յուզւած էի, ևս ուշ դարձրեցի թէ կրոմիցիու տոնի վրայ և թէ Անելկացի լուռ ու մունջ խոնարհութեան վրայ, և ուշ դարձրեցի զլխաւորապէս այն պատճառով, որ առաջուց նկատել էի, որ կրոմիցին այսօր աւելի ևս սառն է վերաբերւում դէպի Անելկան քան առաջ: Երեկի անախսորժութեան այն ինձ անյայս առիթները, որոնք մի անգամ արդէն սառնութիւն էին քցել նրանց մէջ, նորից կրկնւել էին և աւելի սաստկութեամբ: Բայց ժամանակ չունէի դրա մասին մօտածելու: Անելկայի ոտներին դրոշմած համբոցիներիս թարմ տպաւորութիւնը համակել էր իմ ամբողջ էութիւնը: Միւնոյն ժամանակ զգում էի և' երջանկութիւն, և' ուրախութիւն, և' երկիւզ: Երջանկութեանս պատճառը հասկանալի էր ինձ, — ես ինձ միշտ երջանիկ եմ զցացել, երբ դիմել եմ թէկուզ Անելկայի ձեռքին: Բայց ինչիցն է ուրախութիւնս: — Նրանիցն է, որ գուշակում էի, որ այդ անյողքովզ կինը չկարողացաւ պահանել իրան իմ դէմ և այժմ անշուշտ ինքն իրան ասելիս կը լինի. «Ես էլ եմ թէք մակարդապի վրայ, ևս էլ չեմ կարողանում ուղիղ մարդկանց երեսին նայել. մի բովէ առաջ իմ ոտներիս մօտ էր այն մարդը, որ ինձ սիրում է, և ես պէտք է մասամբ նրա գործակիցը լինեմ, որովհետեւ չեմ գնալ ու մարդուս չեմ ասիլ. պատժիր նրան, իսկ ինձ տար քո հետո:»

Դիմէի նոյնպէս, որ նա այդ չի կարող անել առանց աչքի տակ առնելու, որ դրանով մօր առողջութիւնը վտանգի կենթարկի և ընտանեկան ահազին փոթորիկ կը բարձրայնի, իսկ եթէ կարողանայ էլ, միւնոյն է դարձեալ չի անի, վախենալով որ իմ ու կրոմիցիու մէջ ընդհարում տեղի կունենայ: Եւ ինչ որ մի ձայն շշնջում էր ականջիս. — «Ո՞վ գիտի, մւամ համար է աւելի շատ վախենում»:

Ցիրաւի նրա դրութիւնն էլ բացառիկ էր, իսկ ես օգուում էի նրա դրութիւնից բոլորովին գիտակցարար, առանց ամենեին խըզճահարւելու, ինչպէս զօրավարը պատերազմի դաշտում օգուում է հակառակորդի անյաջող դրութիւնից: Ես ինձ միայն մի հարց տեղի՝ թէ աարդեօք կանէի նոյն բանը, եթէ իմանայի, որ դրա հա-

մար Կրոմիցկին ինձ անձնական պատասխանառութեան կենթարկիւ: Տեսայ որ կարող եմ կատարեալ բարեխղճութեամբ պատասխանել այցու, և վճռեցի, որ պարտաւոր չեմ ուրիշ նկատումներով առաջնորդւել:

—Զէ... Կրոմիցկին ինձ համար միայն նրանով է երկիւղալի, որ կարող է Անելկային վերցնել և ով գիտէ ուր տանելը Յուսահասութիւնն ինձ տիրում է այդ միտքն անելիս:

Բայց այդ բռդէին կառքի մէջ ես ամենից շատ Անելկայիցն էի վախենում: Ի՞նչ կը լինի վաղը: Ի՞նչ աչքով կը նայի նա իմ այսօրւան վարժունքի վրայ: Երբեւ լրութեան վրայ կը նայի, թէ իրը և սիրոյ խանդի վրայ, սիրոյ, որ մօտենում է աստւածացման ես զգում էի այն, ինչ որ զգում է այն շունը, որ վատ բան է արել ու վախենում է ծեծից: Անելկայի դիմացը նստած, աշխատում էի նայել նրա երեսին այն բոպէին, երբ լուսնի շողքը նրա վրայ էր ընկնում, և կարդալ նրա երեսի վրաց, թէ ինձ ինչ է սպասում: Այնպէս հեղութեամբ էի նայում նրան, այնքան խեղճ էի երեսում, որ ինքս ինձ խղճում էի. ինձ թւում էր, որ նա էլ պէտք է ինձ խղճալիս լինէր: Բայց նա ինձ չէր նայում ու լսում էր կամ ցոյց էր տալիս թէ լսում է Կրոմիցկուն, որ երկար ու բարակ բացատրում էր հօրաքրոջս, թէ ինչ անադին օղուտներ կը քաղէր, եթէ Գաշտէյնը իրանը լինէր: Հօրաքրոյրս գլխով էր անում, իսկ նա ժամանակ առ ժամանակ կրկնում էր՝ «այնպէս չի», հը: Ակներեւ է, որ նա ուզում էր հօրաքրոջս համոզեցնել, թէ ինքը վաճառականական հանճարեղ ընդունակութիւնների տէր է և կարող է ամեն մի գուշ տասնապատիկ դարձնել:

Հօֆգաշտէյն տանող ճանապարհը կտրած տարած է ժայռերի միջավ և օձապոոյտ գալարւում է անդունդի վերեւում: Լուսնի շողքը ճամբարդին մէկ մեզ վրաց էր ընկնում, մէկը մեր տիկինների վրայ: Անելկայի երեսի վրաց տեսնում էի միայն մեղմ վիշտ, բայց այդ էլ ինձ սիրու էր տալիս,—լաւ էր որ խստութիւն չկար: Նա ոչ մի անգամ չնայեց ինձ, բայց ես ինքս ինձ քաջալերում էի ենթադրելով, որ նա ինձ այն ժամանակ է նայում, երբ ինքը մըթնում է լինում, իսկ մեզ լուսաւորում է լուսնեակը, և ինքն իրան մտածում: Հայնու ամենայնիւ ոչ ոք ինձ աշխարհի երեսին այնպէս

չի սիրում, ինչպէս նա, և նրանից անբախտ մարդ չկայ։ Եւ իրօք, այդ զուս ճշմարտութիւն էր։

Մենք երկուսով լուռ էինք, խօսում էր միայն կրոմիցկին։ Նրա խօսքերը խաւնւում էին գետի ձայնի հետ, որ հոսում էր անգունդի խորքում, և անւարդելի (տօրմաշն) անախորժ ճռճռոցի հետ, որով կառապանը անդադար դանդաղեցնում էր կառքի ընթացքը։ Այդ ճռճռոցը գրգռում էր իմ նեարդերը, բայց միւս կողմից հանգստացնում էր նրանց տաք ու պայծառ գիշերը։ Արդէն ասել եմ, որ լուսնի լրումն էր. լուսինը դուրս եկաւ սարերի ետևից և լողում էր ջինջ երկնակամարի վրայ, լուսաւորւելով Բօքշտէյնկողլ լեռների կատարները, Ցիշկարի սառցակոյտերը և Գրանկօղլի անդընդահերձ լանջերը։ Գագաթների վրայի ձիւնը փայլում էր բաց-կանաչաւուն, մետաղեայ դոյնով, և որովհետև լեռների ստորոտները խաւարի մէջ միախաւնում ու մի գորշ զանգւած էին կաղմում, այդ պատճառով գագաթները երեւում էին կարծես օղի մէջը կախւած, օղեղէն, հողից բոլորովին կարւած։ Այնքան վեհութիւն կար այդ ամբողջ տեսարանի մէջ, այնպիսի անդորրացնող հանգստութիւն էր բուրում քնի մէջ թաղւած լեռներից, որ ակամայ միտս եկան այս խօսքերը.

Օ՛, այսպիսի բուպէներին ոգեշունչ
Երկու սրտեր արաաւում էին լուռ ու մունջ,
Եւ մոռանում, իրար ներում ամեն բան,
Խնչ ներելով՝ կարող են տալ մոռացման ¹⁾։

Սակայն նա ի՞նչ բան պէտք է ների ինձ,—այն, որ համբուրեցի նրա մտու: Օ՛, եթէ նա տաճարի մէջ դրւած սուրբ արձան լինէր, դարձեալ իրաւունք չէր ունենայ բարկանալու ու վիրաւորւելու իմ ջեմեանդութեան այդ տեսակ արտացայտութեան համար։ Եթէ բանը բացատրութեան համնի, ես այդ նրան կասեմ, և նա պէտք է համաձայնի ինձ հետ։

Յաճախ միտք եմ անում, որ նա նրա համար է ինձ հետ անիրաւացի վարւում, որ գուցէ առանց ինքն իրան հաշիւ տալու, առանց ամեն բանի իւր անունը տալու, իմ սէրը համարում է

¹⁾ Թարգմ. Ա. Ծատուրեանց։

լոկ երկրային զգացմունք, երբեւ զգայական սիրոյ մի խանգ: Ես էլ գիտեմ, որ իմ սէրը հիւսած է զանազան թելերից, բայց Անել-կան կարծես :ի հասկանում այն, որ իմ սիրոյ մէջ կան վերին աստիճանի իդէալական, կարծես պօէզիայից մանւած թելեր: Երբեմն կիրքս քնում է, ես սիրում եմ նրան հողեկան սիրով, այնպէս, ինչպէս մարդիկ կարծում են թէ սիրում են պատանեկան հասակում: Երբեմն էլ այն միւս մարդը, որ նստած է իմ մէջ, որը ամեն բան քննում, կշռադատում ու յաճախ ծաղրում է, ասում է ինձ ես չէի իմանում, որ դու սիրում ես գիմնազիստի ու ռոմանատիկի պէս: Բայց ծիշտ որ այդպէս է: Կարելի է այդ ծիծաղելի է, բայց ես այդպէս եմ սիրում և զգում եմ, որ իմ սէրը շինծու չէ և միւնոյն ժամանակ թշւառ սէր է, որովհետև նրան միակողմանի են դասում և հարկաւոր նշանակութիւնը չեն տալիս նրան:

Ահա հիմա էլ այն բոպէներիցն է, երբ կիրքս քնած է լինում, և ես սրտիս խորքում ասում էի Անելկային՝ Շնու կարծում ես իմ մէջ չթն հնչում իդէալական լարեր: Ահա հէնց այս բոպէիս քեզ սիրում եմ այնպէս, որ դու կարող ես, մինչև անգամ պէտք է ընդունես իմ սէրը... և վայ կը գայ օրիդ, եթէ մերժես, որովհետև լնդունելով ինքդ ոչինչ չես կորցնի, իսկ ինձ փրկած կը լինես կորստից: Ես ինձ ու ինձ կասէի ահա իմ աշխարհը, ահա այն սահմանները, որոնց մէջ հնարաւոր է իմ գոյութիւնը, գոնէ կունենայի մի բան, կաշխատէի բնութիւնս փոխել, ընդունել քո հաւաաը ու մի անգամ ընդ միշտ հետեւ քո դաւանանքներին:

Ինձ թւում էր, որ նա կարող է ու պէտք է ընդունի այդ պայմանը, որից յետոյ մեր մէջ ու մեզ համար մշտական խաղաղութիւն կը լինէր: Ես ինձ խօսք տւեցի, որ այդ նրան կասեմ, և եթէ ընդունենք, որ մեր հոգիները յաւիտեան միմեանց են պատկանում, դրանից յետոյ մենք կարող ենք մինչև անգամ միմեանցից բաժանելի: Սիրոս հաստատ վկայում էր, որ նա կը համաձայնի, որովհետև կը տեսնի, որ առանց դրան մեր երկուսիս կեանքն էլ անտանելի կը լինի:

Ժամը ինն էր, երբ հասանք Հովգաշտէյն: Գիւղը բոլորովին հանգիստ էր, ոչ մի տան կըակ չկար, հիւրանոցի առաջ ոչ մի

կառք չկար։ Լոյս էր երևում միայն հիւրանոցի պատուհաններից։ Մեղերի մօտ տղամարդկանց մի համերգ բաւական լաւ երգում էր։ Մենք մէկ ուղեցինք առաջարկել երգիչներին, որ մի բան էլ մեզ համար երգեն, բայց դուրս եկաւ, որ երգողները զիւղացիք չեն, այլ ուժիննացի ալպինիստներ, որոնց ի հարկէ չէր կարելի առաջարկել, որ փողով երգեն։ Գնեցի ալպեան ծաղիկների երկու փունջ, մէկը տւեցի Անելկային, միւսի կալը քանդեցի և որպէս թէ յանկարծ ձեռքից այնպէս վայր դցեցի, որ ընկաւ Անելկայի ոռների մօտ։

—Թողղ մնայ այլպէս, —ասացի ես, —տեսնելով որ նա ուղում է ժողովի ծաղիկները, և գնացի երրորդ փունջը գնելու հօրաքրոջս համար։

Դէպի կառքը վերադառնալիս լսեցի Կրոմիցիու ձայնը։

—Այստեղ էլ, Հովհաշտէնում, եթէ մարդ մի հիւրանոց շինի, հարիւրին հարիւր կաշխատի։

—Քո խօսքը էլի նոյն բանի մասին է, —հարցրեցի հանդիսակերպով։

Այդ հարցը դիտմամբ տւեցի։ Այդ նոյնն էր, եթէ ասէի Անելկային։ «Տես, մինչ իմ սիրտն ու հողին միայն քեզնով է լիքը, նրա ուշ ու միտքը միայն փողի հետ է։ Համեմատիր մեր զդացումները ու մեզ երկուսիս։»

Համարեա հաւատացած եմ, որ նա միաքս հասկացաւ։ Վերադառնալիս մի քանի անդամ փորձ արեցի խօսակցութիւն սկսել, բայց ինձ չյաջողեց Անելկային խօսացնել տալ։ Երբ մենք կանգառանք ամարանոցի դաւանը, Կրոմիցին գնաց տիկինների հետ, իսկ ես մնացի կառասպանի փողը վճարելու։ Անելկան թէյ խմելու չեկաւ։ Զօրաքրոջս ասելով նա մի քիչ յոզնած է ու գնաց քնելու։ Նս անհանդիսա եղայ ու սկսեցի ինքս ինձ յանդիմանել, որ նրան տանջում եմ։ Ոչինչ այնքան ծանր չէ սիրող մարդու համար, քան այն դիտակցութիւնը, թէ ինքը չարիք է պատճառում ու վնասում սիրած էակին։ Թէյլ խմեցինք լուս, որովհետեւ հօրաքրոջս քունը տանում էր, Կրոմիցին նոյնպէս կարծես անհանդիսա լիներ, իսկ ես ինձ աւելի ու աւելի էի կրծում ներքուսու։ «Երեսում է, որ իմ վարմունքը դիպել է նրա սրայն, —մտածում էի եռ - Զէ որ

նա միշտ նայում է ամեն բանի վրայ ամենալատ կողմից։ Եւ զգում էի, որ նա վաղը ինձանից կը խուսափի և մեր մէջ կապած հաշտութիւնը խախուած կը համարի իմ կողմից։ Այդ մոքերը սիրառ երկիւղով լցրեցին և ես վճռեցի վաղը գնալ կամ ճիշտը փախչել Վիէննա, առաջինը նրա համար, որ Անելկացից վախենում էի, երկրորդը՝ որ տեսնեմ Խւաստովսկու հետ, իսկ երրորդը՝ մտածում էի, —և միայն Աստւած գիտէ որքան դառնութիւն կար այդ մտածունքիս մէջ, —մտածում էի որ լաւ կը լինի ազատեմ Անելկացին ինձանից և գոնէ երկու օր հանգիստ թողնեմ նրան։

15 լուլիսի.

Որքան դէպքեր։ Ձեմ իմանում, որից սկսեմ, որովհետեւ ամենավերջինը ինձ համար աւելի նշանաւոր է։ Կեանքումն ոչ մի անգամ աւելի պարզ ապացոյց չեմ ունեցել, որ նա անտարեր չէ դէպի ինձ։ Բոլոր ճիզա պէտք է թափեմ պատմութիւնս կարգով անելու համար։ Համարեա հաւատացած եմ, որ Անելկան կը համաձայնի իմ անելիք առաջարկութիւններին։ Մէկ-մէկ գլուխս սկսում է պայոտ գալ։

Սկսեմ կարգով։

Գնացի Վիէննա։ Վերադարձայ այս երեկոյ։ Իերել եմ մի քանի տեղեկութիւններ, որոնց մասին կը խօսեմ հօրաքրոջս հետ։

Տեսայ Խւաստովսկուն և խօսեցի հետը։ Ի՞նչ խելքը գլխին տղայ է... Եզան պէս աշխատում է կլինիկացում։ Ժողովրդական ընթերցանութեան համար կազմում է առողջապահական գիտելիքներ, որ նրա գրավաճառ եղացը պէտք է հրատարակի կոպէկանոց բրոշիւրների ձևով։ գործունեայ անդամ է զանազան բժշկական և ոչ բժշկական ընկերութիւնների, և այդ բոլորից յետոյ կարողանում է ժամանակ գտնել զանազան ուրախ, գուցէ մինչև անդամ շատ ուրախ քէֆէր անելու։ Քարթին-ստրաս-ի շրջակայքումն Աստւած վկայ շգիտեմ, այդ մարդը Արք է քնումն Բայց չնայելով դրան, տնաշէնը կարծես աժդհայ լինի։ Ի՞նչ յորդառատ կեանք է, տեղն ու տեղը եռ է գալիս։

Աւանց աւելորդ ոլորաբանութեան յայտնեցի նրան Վիէննա գալուս պատճառը։

—Զգիտեմ յայտնի է ձեզ թէ ոչ, —ասացի ես, —որ ես ու հօրաքոյրս մեծ փող ունենք. վաստակադործելու (спекулировать) մենք ամենեին կարիք չունենք, բայց եթէ կարելի լինէր շահեցնել մեր ունեցած գրամագլուխը այնպիսի մի գործում, որ կարգին շահ բերէր, այդ շահը մեր հայրենիքին կը յատկացնէինք. բացի այդ կարծում եմ, որ պան կրոմիցկուն էլ գրանով ծառայութիւն մատուցած կը լինենք, այնպէս որ թէ մենք շահւած կը լինէինք թէ նա: Անկեղծ ասած, դէպի ինքը կրոմիցկին մենք անտարբեր ենք, բայց որովհետեւ նա բարեկամ է դարձել մեզ, ինչու նրան էլ օդնած չլինենք, —ի հարկէ այս հաստատ պայմանով, որ մենք ինքներս ոչ մի վնաս չկրենք:

—Եւ գուշ ուզում էք իմանալ, ինչպէս են նրա գործերը:

—Պարզ բան է: Նա յոյս ունի, և իմ կարծիքով անկեղծ յօյս ունի, որ իւր գործերը փայլուն վախճան կունենան: Իայց բանը նրանումն է, արդեօք չԲ սխալում նա: Ուստի եթէ ձեր եղբայրը ձեզ մի բան գրել է, չԷք կարող արդեօք ինձ հաղորդել, —ի հարկէ եթէ այդ գաղտնիք չէ, —թէ ինչ է գրել: Մէկ էլ գուշ մեզ շատ պարտաւորեցրած կը լինէք, եթէ խնդրէիք նրան, որ մեզ ամեն բան մանրամասնօրէն գրի: Այդ դէպքում հօրաքրոջս յոյսը նրա մօտիկութեան վրայ է և այն կապի վրայ, որ կար մեր ու նրա մէջ աւելի առաջ, քան նրա ու կրոմիցկու մէջ:

—Լաւ, եղբօրս կը գրեմ, —ասաց բժիշկը: —Նա մինչև անգամ ինձ դրա մասին մի բան գրել է, բայց չեմ յիշում թէ ինչ, որովհետեւ այդ ինձ քիչ էր հետաքրքրում:

Նա սկսեց թղթերը քրքրել, գտաւ եղբօր նամտկը ու սկսեց բարձր կարդալ:

«Կեանքը անասելի տաղտկալի է: Կին քիչ կայ, իսկ սիրուն կնիկ դեղապետի համար էլ չի գտնւիր: Զէ, այս չի... Այ թող Վիէննա գայ... Ահա այս է, գտայ:

Բժիշկը մի երես դարձեց ու տեղ ինձ: Ինձ հետաքրքրողը մի քանի տողում էր: «Ինչ վերաբերում է կրոմիցկուն, —նաւթի գործում մեր բանը բուրդ է: Ռոտշիլդների հետ կռւելլ անկարելի է, իսկ նա ուզում էր Ռոտշիլդի հետ ու մեկնել: Մի կերպ դուրս պլծանք, բայց մեծ կորուսով: Նաւթ մատակարարելու համար

ահագին փող վեր դրեցիք և մենավաճառութիւնը մեր ձեռքը դցեցինք. այդ մի կողմից միլիսների լոյս է տալիս, միւս կողմից՝ ահագին պատասխանառութիւն կաց մեր վրայ Ամեն բան կախւած կը լինի մեր ճարպիկութիւնից ու հմտութիւնից: Աշխատում ենք գործը որքան կարելի է լաւ տանել և ապագայի վրայ նախում ենք մեծ յոյսով: Հարկաւոր է միայն փող և փող: Մեզ վճարում են որոշեալ պայմանաժամերին, իսկ մեզ նաւթ տւողները փողը կանխիկ են պահանջում, և բացի այդ յաճախ վաս ապրանք են տալիս: Այդ բոլորը այժմ իմ վզին է բարձած» եւու:

— Փող մենք կը տանք, — ասացի ես կարդալը վերջացնելով:

Վերադարձին ես երկար մտածում էի դրա մասին և իմ մէջ լաւ բնազդութիւներս էին շարժում: «Ինչ լինում է լինի, — ասում էի ինձ ու ինձ, — իսկ այժմ աւելի լաւ ու աւելի հեշտ չի լինի արդեօք, Կրոմիցկոն վնասելու փոխարէն օգնել նրան Անելկան կը կարողանայ գնահատել իմ վարմունքը ու հասկանալ իմ անշահանդրութիւնը, իսկ ապագան թող որոշի ինքը նախախնամութիւնը: Սակայն, աւելի խորը նայելով իմ ներսը, տեսայ, որ այդ մտքերում էլ եսականութիւնը որոշ չափով զեր է խաղում: Ես նախատեսում էի, որ Կրոմիցկին փողը ստանալուց յետոց իսկոցն կերթայ Գաշտէնից և ինձ կազասի այն բոլոր տանջանքներից, որ նրա ներկայութիւնը պատճառում է ինձ: Անելկան կը մնայ մենակ ու երախտապարտ դէպի ինձ և զժգոհ, գուցէ և բոլորովին նեղացած Կրոմիցկուց, որ ընդունեց իմ օգնութիւնը: Ինձ թւում էր, որ այդ դրութիւնը կը բանայ իմ առաջ նոր հորիզոններ: Իսկ նախ և առաջ իմ ցանկութիւնս էր ինչ էլ լինի Կրոմիցկուն այստեղից ռադ անել:

Այնպէս խորը մտածմունքների մէջ էի ընկել, որ սկի չնկատեցի Աէնդ-Գաշտէն համելս, ուր տեսայ բազմաթիւ սպանւածներ ու վիրաւորւածներ. — կողքի երկաթուղու գծի վրայ, որ տանում է Ցելիամ Զէ, քիչ առաջ գնացքը խորտակել էր: Բայց այդ սարսափելի տպաւորութիւնը կառք նստելուն պէս բոլորովին անցաւ: Անելկայի մտսին մտածմունքս նորից տիրեց ինձ: Զգում էի, որ ինչ էլ լինի մեր յարաբերութիւնները պէտք է փոխւեն. պէտք է մի բան անել, թէ չէ իմ էլ, Անելկայի էլ բանը վատ կը լինի:

Բայց ինչ անել: Մի բան էի միայն պարզ տեսնում՝ որ նա տանջում ու սպանում է ինձ, իսկ ես՝ նրան, որովհետեւ մինչ ես փափառում եմ ունենալ ամեն բան, իսկ նա չի համաձայնում և ոչ մի բանի, դրանից մեր մէջ այնպիսի տարածալայնութիւն է ծագում ու այնպիսի դրամա է տեղի ունենում, որ լաւ կը լինէր նա իրան ջրվէժը զցէր, իսկ ես կառքի ու ձիերի հետ միասին անդունդը գլորւեի: Բացի այդ ես այն համոզմանն եկաց, որ ոչ մի բանի չհամաձայնող կինն անդամը վերջ ի վերջոց իւր մէջ սարսափելի երկուութիւն պէտք է զգաց, եթէ նրան սիրի մի օտար մարդ: Հենց վերցնենք Անելիկային. նա ինձ ամենաշնչին զիջումն անդամ չի արել, իսկ ես այնու ամենայնիւ ժամանակ առ ժամանակ համբուրում եմ նրա ձեռքերն ու ոտքերը, այնու ամենայնիւ նա պէտք է լսի իմ խոստովանութիւնները, իւր մօրից ու մարդուց գաղոնի պահի, միշտ զդոց կենաց, ինքն իրան ու ինձ հետևի առանց երբէք իմանալու, թէ մինչեւ ուր կարող եմ հասնել: Այդպիսի պայմաններում երկուսիս համար էլ կեանքը անկարելի է: Այս բոլորին պէտք է վերջ առլ:

Վերջապէս ինձ թւաց, թէ գտայ իննդրի լուծումը: Թող Անելիկան, —մտածում էի ես, —համաձայնի և ընդունի իմ սէրը. թող նա ինձ ասի. «Ես քոնն եմ, հոգով ու սրտով քոնն եմ և յաւիտեան քոնը կը լինեմ: Բայց դու պէտք է բաւականանաս դրանով: Եթէ դու այդ պայմանին համաձայնես—մեր հոգիները նոյն բռպէից նշանւած կը լինեն»:

Եւ սրտիս խորքում վճռեցի ընդունել այդ պայմանը: Երևակայում էի, որ ձեռքս կը տամ նրան ու կասեմ: «Առնում եմ քեզ ու երդում», որ քեզանից էլ ուրիշ ոչինչ չեմ պահանջի, որ մեր կապը է և կը լինի զուտ հոգեկան, բայց և այնպէս մեր կապակցութիւնը կը համարեմ որպէս ամուսնութիւն և քեզ՝ որպէս իշկինը»:

Բայց հրակաւոր է արդեօք այդ տեսակ պայմանադրութիւն, և վերջ կը տայ արդեօք նա մեր տանջանքներին: Ինձ համար այդ հաւասար կը լինէր բաղձանքներիս ու յոյսերիս վերին աստիճանի սահմանափակման, բայց այնուհետեւ կունենայի իմ սեփական աշխարհը, որի մէջ Անելիկան կը պատկանէր ինձ անբաժան: Բացի

գրանից այդ կօրինագործէր իմ սէրը, իսկ այդ այնքան մեծ նշանակութիւն ունէր, որ պատրաստ էի առողջութիւնս զոհել, միայն թէ Անելիկան օրինաւոր համարէր իմ սէրը։ Այդ իմ աչքում մի նոր ապացոյց է, թէ որքան սաստիկ եմ սիրում այդ կնոջը, ինչ-պէս հոգով սրուով ցանկանում եմ, որ նա որ և է կերպով պատ-կանի ինձ։

Այո, ես այն աստիճան փոխւել եմ, որ այդ գնով պատրաստ էի համաձայնել ամեն տեսակ սահմանափակումների։

Ուստի սկսեցի ուշի ուշով կշռադատել միայն այն հարցը, թէ կը համաձայնի արդեօք Անելիկան։

Ինձ թւում էր, որ նա պէտք է համաձայնի։

Ես կարծես արդէն լսելիս լինէի, թէ ինչպէս եմ ասում նրան։

—Եթէ դու յիրաւի սիրում ես ինձ, տես, միւնոյն բանը չի արդեօք, այդ քո բերնով ինձ ասած կը լինես թէ ոչ, Խ՞ոչ կայ աւելի վսեմ, աւելի սուրբ այն սիրուց, որ ես պահան ջում եմ քե-ղանից։ Ես տալիս եմ քեզ իմ ամբողջ կեանքը, —թող քո Խիղճն ասի, պարտական չի՞ս արդեօք ինչպէս հարկն է ընդունել այդ զո-հարերութեան նշանակութիւնը։ Զէ՞ որ այդ նոյնն է, ինչ որ Բէատ-րիչի վերաբերումը դէպի Դանտը։ Այդ տեսակ սիրով մինչև ան-դամ հրեշտակները կարող են միմեանց սիրել։ Դու ինձ հետ մօտ կը լինես այնպէս, ինչպէս երկու հոգիներ կարող են միմեանց մօտ լինել, և միւնոյն ժամանակ այնքան հեռու, որպէս թէ ապրելիս լինէիր այս սարերից ամենաբարձրի գագաթին։ Եթէ այդ սէրը երկրային սէր չէ, եթէ սովորական մարդիկ այցպէս սիրել չեն կա-րող, ուրեմն ես առաւել դու չպէտք է մերժես, որովհետեւ ընդու-նելով այդ սէրը, դու կը մնաս մաքուր, որպէս ձիւն, և միւնոյն ժամանակ փրկած կը լինես ինձ, —ձեռք կը բերես լիակատար հան-գստութիւն ու բախտաւորութիւն, որքան որ այդ հնարաւոր է երկրիս վրայ։

Ես ինձ անկեղծ ընդունակ էի համարում այցպէս միստիկա-բար սիրելու և հաւատալու, որ այդ հողեղէն ու վաղանցով բո-ժոժոժոց կը գոյանայ անմահ թիթեռ, որ կտրւած երկրային պայ-մաններից, կը թռչի մի մոլորակից դէպի միւսը, մինչև որ կը միա-նայ ամենագոյութեան հոգու հետ։ Առաջին անգամ մոգովս անցաւ,

որ ես ու Անելկան, ինչպէս ձեմք, կարող ենք ոչնչանալ, իսկ մեր սէրը մեզնից յետոյ էլ գոյութիւն կունենայ, կը մնայ յաւիտեան, և հենց այդ կը լինի մեր անմահութիւնը: Ո՞վ դիտի, —մոտածում էի ես, —արդեօք հենց այդ չէ միակ ու իսկական անմահութիւնը: Որովհետեւ պարզ տեսնում էի, որ իմ զդացմունքի մէջ կայ մի բան, որ յաւիտենական է և անցաւոր երեսցների կարգից դուրս է: Պէտք է մարդ սաստիկ սիրի, որ ընդունակ լինի այդպէս զգալու ու այդ տեսակ մոտածմունքներ ունենալու: Նոյնպէս պէտք է մարդ չափից դուրս դժբախտ լինի և, շատ կարելի է, խելագարւելուն մօտ:

Խելագարութեան գեռ շատ մօտ չեմ, բայց գնալով աւելի եմ խորասուզում միստիկականութեան մէջ և ինձ բախտաւոր եմ զգում, երբ այնքան անհետանում ու ցիր ու ցան եմ լինում, որ այլ ես չեմ կարողանում գտնել իմ սեփական «ես»-ը: Եւ գիտեմ թէ ինչ է դրա պատճառը: Իմ երկարաժանումներս, իմ ներքին կրիտիկան միշտ բաւական են եղել խորտակելու կեանքի բոլոր հիմունքները, ուրեմն և քայլքայլու այն պայմանական բախտաւորութիւնը, որ կարող են տալ այդ հիմունքները: Իսկ այնուեղ, ուր հաւաքարանութիւնը աեղի է տալիս զդացումներին ու տեսիլքներին, ես իմ կրիտիկայով ոչինչ չեմ կարողանում անել, հանգստանում եմ և անասելի թեթևութիւն եմ զգում:

Այդպէս հանդստանում էի ճանապարհին՝ Գաշտէյն գնալիս: Տեսնում էի ինձ ու Անելկային հոգեպէս նշանած, անդորր, հսկարտանում էի մտածելով, որ այնու ամենայնիւ կարողացայ դուրս պրծնել կախարդւած շրջանից և հնար գտայ բախտաւոր լինելու: Ես հաւատացած էի, որ Անելկան ուրախութեամբ ձեռքը կը տայ ինձ այդպէս միատեղ ճանապարհորդելու համար:

Բայց յանկարծ սթափւեցի ինչպէս քնից ու նկատեցի, որ իմ սեփական ձեռքը ամբողջապէս արեան մէջ է: Բանից երեաց, որ իմ կառքով վիրաւորներ են կրել գնացքը խորտակելուց յետոյ: Կառապանը չի նկատել, որ կաշւէ բարձերի ծալքերում բաւական արիւն է ժողովւել: Իմ միստիկականութիւնը այնքան հեռու չի գնում, որ կարողանայի հաւատալ, թէ գերաշխարհային ոյժերը մասնակցութիւն ունեն մարդկային կեանքի մէջ, մանաւանդ զանազան բարի կամ չարաղուշակ նշանների ու նախազգուշացումների

ձեռվի ևս նախապաշարւած չեմ, բայց կարողանում եմ ինձ նախապաշարւած մարդու դրութեան մէջ զնել, ուստի և կարողանում իմ նշմարել մի օտարուակ բան: Զարմանալի էր առաջինը՝ որ հէնց այն կառքում, որի մէջ սկսեցի գծագրել նոր կեանքի պատկերներ, շատ հաւանական է, որ քիչ առաջ հանգել է մէկ ուրիշի կեանքը, երկրորդ՝ որ համաձայնութեան ու անդորրութեան մասին երազում էի արիւնաթաթախ ձեռքերով: Այդ տեսակ զուգաղրութիւնը ամեն նեարդու մարդու սիրա լցնում են միշտ տխուր ոչ—նախապաշարութեներով—այլ տպաւորութիւններով և կարող են մռայլ սուեր դժել նրա մտածմունքների ամբողջ ընթացքի վրայ:

Իմ մոքերս էլ անշուշտ մռայլ գոյն կընդունէին, եթէ արդէն Վիլդբաղին մօտենալիս շինէի: Մեր կառքի հանդէպ, որ կամաց կամաց բարձրանում էր սարը, մի ուրիշ կառք սրարշաւ իշնում էր սարից: «Մի բան էլ հիմա չպատահի,—մոտածեցի ինձ ու ինձ,—ճանապարհն այստեղ նեղ է, դժւար թէ երկու կառք կարողանան անցնել...» Բայց այդ ըովէին մեր դիմացը եկող կառքի կառապանը անւարգելը յանկարծ այնպէս դարձրեց, որ քիչ մնաց ձիերը նստէին յետի ոտների վրայ: Կառքի մէջ ի մեծ զարմանս իմ՝ նստած էին հօրաքոյրս ու Անելիկան, որոնք ինձ տեսնելուն պէս աղաղակեցին՝ «Նա է, Նա է, Լէօնն է»: Մի ըովէից յետոյ ես նրանց մօտնէի: Հօրաքոյրս ինձ գրկել ու անդադար կրինում էր. «Փառք քեզ Ասուած, փառք քեզ»—հաղիւ հազ շունչ քաշելով, կարծես թէ Վիլդբաղից ոտքով ու վագէվազ եկած լինէին: Անելիկան ձեռքս բռնել ու բաց չէր թողնում: Յանկարծ նա սարսափած երեսով դոչեց.

—Դու վիրաւորւած ես:

Հասկացայ ինչ էր նրա ասածը և իսկոյն պատասխանեցի.

—Զէ, չէ: Ես այն գնացքում չէի: Վրայիս արիւնը կառքիցն է, որով երեւի վիրաւորներ են կրել:

—Ուղիղ ես ասում, համ, ուղիղ, —հարց ու փորձ էր անում հօրաքոյրս:

—Հաւատացած կացէք:

—Այդ մը գնացքն է խորտակւել:

—Ցէլ-ամ-Զէից եկող:

—Ախ, տէր իմ Աստւածու Խոկ հեռագրում ասւած էր թէ Վիհննայինը։ Քիչ մնաց սիրտս ճաքէր։ Տէր Աստւած, այս ի՞նչ բախտ է։ Փառք իրան, փառք։ Հօրաքոյրս սրբեց ճակատի քրահինքը, Անելիան գաճի պէս սպրդնել էր։ Զեռքս թողնելով նա երեսը մի կողմ դարձրեց, որ չնկատեմ նրա զողվողացող շրթունքներն ու աչքի արտասուքը։

—Մենք տանը մենակ էինք, —պատմում էր հօրաքոյրս, —Կրոմիցկին ինչ որ բելգիացիների հետ զնացել էր նասվելլի։ Այդ միջոցին հիւրանոցի տէրը վաղէվազ եկաւ մեզ մօտ ու ասաց, թէ ճանապարհին դժբախտութիւն է պատահել։ Ես գիտէի, որ այսօր դալու ես. երևակալիք թէ ինչ կը լինէի ես։ Խակոյն ուղարկեցի կառքի յետևից. Անելիան (ազնիւ հոգի) ոչ մի կերպ չհամաձայնեց ինձ մենակ թողնել։ Այն ի՞նչ րոպէ էր, որ մենք քաշեցինք... Բայց, փառք Աստուծոյ, բանը միայն երկիւլով վերջացաւ... Դու վիրաւորւածներին տեսմու։

Ես համբուրեցի Անելիային ու հօրաքրոջս ձեռքը և սկսեցի պատմել Աէնդ-Գաշաէյնում տեսածու։ Բանից երևաց, որ Կուրհառւզում շատ վիրաւորներ ու սպանւածներ կան։ Բոլորն այնպէս են հասկացել, թէ աղէտը պատահել է Վիհննա-Զալցբուրգ գծի վրայ... Տասից մէկն էի պատմում, —զլիսիցս դուրս չէր դալիս այն ուրախալի միտքը, որ Անելիան չի ցանկացել տանը սպասել հօրաքրոջս վերադառնալուն, այլ նրա հետ եկել է ինձ դիմաւորելու։ Արդեօք այդ միայն հօրաքրոջս համար է արել։ Հաւատացած էի, որ չէ Տեսնում էի նրա անհանգստութիւնն ու շփոշմունքը, նրա երկիւլը, երբ նա տեսաւ ձեռքս արիւնոտած, նրա պայծառացած, ուրախ դէմքը, երբ իմացաւ, որ ես ականատես անդամ չեմ եղել այդ սարսափելի աղէտին. տեսնում էի, որ նա մինչև այժմն էլ յուղւած է և սրտի ուրախութիւնից լացը դալիս է։ Նա լաց կը լինէր անշուշտ, եթէ ես նրա ձեռքից բռնէի ու ասէի թէ սիրում եմ իրան... այն ժամանակ նա անշուշտ չէր լիլի իւր ձեռքը։ Խակ երբ այդ բոլորը ինձ համար լոյսի պէս պարզեց, ինձ թւաց թէ իմ տանջանքներիս վերջը եկել է, իմ կեանքը կը փոխւի և գոյութեան նոր շրջան կը սկսի։ Փորձ չեմ անում անդամ նկարադրելու, թէ ինչ էի զգում ես, ինչպիսի ուրախութեամբ էր լցւած սիրտս։ Ժամանակ

առ ժամանակ նայում էի Անելկային այնպիսի հացեացքով, որի
մէջ ուզում էի ամփոփած լինել սիրոյ բոլոր ոչժը, —և Անելկան
ժպտում էր երեսիս: Նկատեցի, որ նա ոչ վերարկու էր հագել և
ոչ ձեռնոց: Պարզ է, որ նա երկիւղից ու շփոթւելուց ամեն բան
մոռացել է: Եղանակը ցրառում էր և ես ծածկեցի նրան իմ վերար-
կուով: Նա մի քիչ լնդիմացաւ, բայց շուտով համաձայնեց, մա-
նաւանդ որ հօրաքոյրս էլ իմ կողմն էր:

Ցանը պանի Ցելինան ինձ այնպէս սրտանց ողջունեց, որ կար-
ծես իմ մահից յետոց Անելկային չէր հասնելու Պլոշովսկիների բոլոր
կարողութիւնը: Այդպէս աղնաւահողի, բարեսիրտ կանանց ցերեկով
էլ ճրագով չես գտնի: Բայց ևս երաշխաւոր չեմ լինի, որ երբ Կրո-
միցին նասֆելիից վերադարձել ու իմացել է ամեն բան, կամացուկ
հոգոց :ի քաշել ու ինքն իրան մտածել, թէ աշխարհը իւր ըն-
թացքը չէր փոխի, եթէ որ զրկւէր բոլոր Պլոշովսկիներից:

Նա վերադարձաւ յոդնած ու թթւած: Այն բելգիացիները,
որոնց հետ նա ծանօթացել ու նասփելի էր գնացել, անտերպենցի
կապիտալիստներ են: Կրոմիցին նրանց իզիոս էր անւանում, որով-
հետև նրանք բաւականանում էին երեք տոկոսով իրանց դրամա-
գլխից: Վաղը, ինչպէս նա ասաց, պէտք է ինձ հետ խօսի մի կա-
րեոր գործի մասին: Առաջ ես անհանդիսա կը լինէի, բայց այժմ
գուշակում էի, որ այդ կարեոր գործը վերաբերելիս կը լինի որ և
է Փինանսական ձեռնարկութեան: Ես կարող էի իսկոյն և եթ ասել
տալ նրան իւր միտքը, բայց գերադասեցի մնալ մէն մենակ իմ
մտքերիս հետ, իմ բախտիս հետ, իմ Անելկայիս հետ, որ կրում
եմ սրտիս ու հոգուս մէջ... Ես սեղմեցի նրա ձեռքը բարի զիշեր
ցանկանալով, և նա պատասխանեց ինձ նոյնպէս ջերմ սեղմելով

(Կը շարունակւ)